



ՀԱՅԻՐԱՅԻՆ ԴԱՐԱՆ

ԱՐԱՐԱՅԻՆ ԴԱՐԱՆ

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 136

28 ՓԵՏՐՈՒՄ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ՏՕՒԱՑՈՅՑ

Մաս	1	† Կիր. դձ.	Բ. Քառասնորդաց
	2	Բշ. ղկ.	Ը. or աղցից
	3	Գշ. աձ.	Թ. or »
	4	Դշ. ալկ.	Ժ. or »
	5	Եշ. քձ.	ԺԱ. or »
	6	Ուր. քկ.	ԺԲ. or »
	7	Շք. գձ.	ԺԳ. or Մեծ-Պահոց: Եւ Կիւրղի Երուսա- ղեմայ Հայրապետին եւ միւս Կիւրղի ե- պիսկոպոսին եւ մօր նորա Աննայի:

Արքուանիս Ս. Ասուածածին Եկեղեցւոյս մեջ առաջիկայ Մեծ Պա-
հոց Կիրակի օրերուն քարոզները քուրքերէն լեզուով պիտի տրուին նոյն
Եկեղեցւոյ Մեծաւոր Գեր. Ասուրեան վարդապետի կողմանէ, հետեւեալ
նիւթերուն վրայ.

Ա. Կիրակե. Պէտք է որ գտնուի Եկեղեցւոյ մեջ. ուսուցանող իւ-
խանութիւն մը:

Բ. Կիրակե. Պէտք է հաւասար Եկեղեցւոյ խօսքին:

Գ. Կիրակե. Պէտք է գործնականապէս հաւասար Եկեղեցւոյ խօսքին:

Դ. Կիրակե. Պէտք է ննազանդիլ Եկեղեցւոյ:

Ե. Կիրակե. Պէտք է սիրել Եկեղեցին:

Ծանօթ.— Կիրակի օրերը ժամը 4ին երեկոյեան ժամերգութիւն պի-
տի կատարուի եւ անմիջապէս յետոյ Քարոզ պիտի տրուի:



ԿԱԹՈՂՈՍԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ՝ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Չորրորդ տարի 28 Փետրուար 1914 Թիւ 136

«Մերական Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը բա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
սարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի Յէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Ի. Թերզեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կրիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուանմարաւ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿԶՐԻՆՔՆԵՐ

Գ.

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ՀԱՆԻԿՆԵՐ

1793ի Օգոստոս 10ը ահաւոր հանդիսի եւ հանդիսաւոր ահաբեկման օր մըն էր Փարիզի եւ ընդհանուր Գաղղիոյ համար. այն օր դէպ ի հեթանոսութիւն վերադարձն կը տօնուէր հեթանոսական արարողութիւններով, Պիղծ Թափոր մը հրապարակէ հրապարակ կը վազէր, կը խռնէր, կ'աղմկէր ու կ'ոռնար. նուագախումբեր կը ձայնակցէին, խնդանօթ-հեր կ'որոտային. եւ ահա թափոր սինլքոր ղասակարգէ եւ մանաւանդ լիտիացող կիներէ կազմուած հասարակական Պատգելիքի հրապարակը, ուր կանգնած էր մայր բնութեան կուռքը՝

պօգալի կնոջական արձան մը, որ ստինքնէրէն ջուր կը հոսէր: Խմեց անկից խաժամու-
ժը, հեթանոսական աղօթքներ եղան, եւ մեկնեցաւ դիւազրգիւ թափորը յեղափոխու-
թեան հրապարակը, ուր նոր արարողութիւն-ներ կը կատարուէին Ազատութեան կուռքի առջեւ, որ գաճէ թափուած սփռել ու լպիրշ պատկերացում մի էր մարդկային այս չնաշ-
խարհիկ ձիրքին: Երեք հազար թոշուներ վանդակներէ կ'արձակուէին կուրծքերնին ար-
ձանագրուած՝ «Մենք ազատ ենք, մեզի նմա-նեցե՛ք»: Անասնական ազատութեան, որ ըսել է բանաւոր եւ ճշմարիտ ազատութեան զեղ-
ծումի եւ լիտիացման հանգէն էր որ կը կատարուէր, որուն զօն գացին կարգ, օրէնք, իշխանութիւն, բարոյական, կրօնք եւ ամէն ինչ որ ստանց կը վերաբերէ: Ո՛ւր լմնեաւ այդ խայտառակութիւնը. Clotzի բանակա-
նութեան դիցուհւոյն ներկայացուցիչին՝ Can-

deille բողոքն երկրպագութեամբ։ Սա թափանցիկ շղարշ մը հազուադէպ, կապոյտ վերարկու մը կոնակը, յեղափոխութեան կարմիր գլխարկն գլուխը, շրջապատուած իր կարգի կրկնորով, դրուեցաւ Notre Dameի Աւագ խորանին վրայ, ոտքին տակ գետնուեցաւ խաչելութիւնը, եւ այդ գիրքին մէջ ընդունուեցաւ խնկարկութիւն, երկրպագութիւն։ Ներեցէք որ տգեղ մանրամասնութեանց իշայ, բայց չէի կրնար զեղծող ազատութեան, անբարոյական ազատութեան կենդանագոյն պատկեր մը գտնել։ Մարդն՝ երբ անասունի պէս ուզէ ազատ ըլլալ, հարկ է որ անասունի պէս ցեխի մէջ թաւալգորի մոռնալով պատիւ, ամօթ, ու բանականութիւն։ Կրից ու մեղաց ազատութիւնն չի կրնար ուրիշ վերջաւորութեան յանգիլ, հարկաւորապէս ուրացում է ճշմարիտ ազատութեան, վերութիւն մ'է։ Միայն բարին, բարոյականութիւնը եւ առաքինութիւնը՝ ապացոյց են եւ երաշխաւորում ազատութեան։ Պիտի ջանանք ցուցնել այս։

Ի՞նչ է բարութիւն եւ բարի առհասարակ. հոս ալ մեկնինք ժողովրդական իմաստէն, որ նախնական ըլլալով՝ հիմնեալ է. մարդս հաւնած առարկային լաւ, գեղեցիկ, կատարեալ կ'ըսէ։ Կը նշանակէ այս թէ բարութիւնն՝ հաճոյք, հաւանութիւն, ախորժ դրաւելու այն ձգողական ջուրն է, զոր առարկայ մը կամ ունի, կամ կը կարծուի թէ ունի՝ ըստ որում նա իրօք կամ առերեւոյթս բարի է։ Անոր համար կ'ըսէ փիլիսոփան թէ բարին ինքնին ախորժելի եւ հաճոյական է. եւ ինչ որ ախորժելի ու հաճոյական է՝ բարի ըլլալու է։ Եւ իրօք ե՛րբ է որ իր մը հաճոյական կը նկատենք. երբ սա իր բնութեան պահանջին համաձայն ամբողջ է. տան մը լաւ տուն կ'ըսենք, երբ անիկայ լաւ տան մը ամէն պէտք եղածն ունի։ «Բարի կ'ըսուի առարկայ մը ըստ որում կատարեալ է» (Ս. Թովմաս, Ա. խնդ. 5. յ. 1)։ Ի՞նչ է կատարեալն. կատարել՝ կը նշանակէ գործ մը վերջացնել, հետեւաբար կատարեալ կը նշանակէ առարկայ մը, գործ մը, որ իւր բնութեան պահանջած ամբողջացման

հասած է։ Այս իմաստէն մեկնելով՝ փիլիսոփայք կատարելութիւն ըսելով ո՛ր եւ է ըլլալու կամ գործելու եղանակ ու աստիճան չէ որ վ'ուզեն նշանակել. այլ ամենալաւ եղանակը եւ ամենաբարձր աստիճանը։ Անոր համար երբ կը հարցնենք թէ այս կամ այն ինչ իրը կամ օրնձը կատարեալ է բնութեամբ կամ գիտութեամբ, չենք ուզեր հասկնալ թէ ուրիշ ձիրք ալ ունի՞. հապա թէ բնութիւնը կամ գիտութիւնը լաւագոյն եւ ամենաբարձր աստիճանի՞ է։ Անոր համար կատարելութիւնը առարկայի մը ի սպառ ամբողջացումն է, այնպէս որ իր բնութենէն ու ձիրքերէն բան մը չպակսի։ Այս իմաստով Աստուած իրենք ստեղծելէն վերջ իւրաքանչիւրն իւր բնութեան համաձայն կատարեալ գտաւ։ «Նսես զի բարի եմ». ըսել է թէ բարութիւնը կատարելութիւն եւ կատարելութիւնն իւրականութեան ամբողջութիւնն է. եւ ահա այսպէս բարութիւնն իրական ըրինք եւ իրականութիւնը բարի եւ բարութիւն։ Իրականութիւնն ալ որ հիմն է ճշմարտութեան, ինչպէս տեսնենք, կը զուգէ այսպէս բարութիւնը ճշմարտութեան հետ անխզելի եղանակաւ, որով բարին ճշմարիտ է եւ ճշմարիտը բարի։ Շքեղ գաղափար, որ կը բացաւրէ բարութեան եւ ճշմարտութեան բնական հարկը, որուն պատկառ մնալու է մարդս եւ հպատակ, ինչպէս ուրիշ ամէն բնական ու ֆիզիքական օրինաց։ Եւ որովհետեւ իրականութեանց միակ հիմնեալն եւ հարկաւորապէս գոյականն է Աստուած, է միանգամայն ամէն ձիրքերու եւ կատարելութեանց բովանդակութիւնն, որով է ինքնին ճշմարտութիւն եւ բարութիւն։ «Մի է բարի» (Մտթ. ԺԹ. 17). «Զի ոք բարի՝ բայց մի Աստուած» (Մրկ. Ժ. 18)։ Անոր համար ալ Աստուած ինչպէս իրաց գոյութեան պատճառ է, նոյնպէս ազգիւր է անոնց ճշմարտութեան եւ բարութեան։ Ստեղծագործութիւնն Աստուծոյ կատարելութեանց ցոլացումն եղաւ արարածնիւրով եւ ասոնք ըստ իրենց տեսակին եւ աստիճանին կը ցայտեցնեն անոր նմանութիւնը, պատմելով հանդիսիւ անոր փառքը։ Հետեւաբար այս, ձեւն, որով իրենք են՝ ինչ

որ են, Աստուծոյ նմանողական հաղորդակ-
ցութիւնն է և ով որ աւելի հաղորդակից է
այդ նմանութեան, աւելի կատարեալ է։
Սակայն այս՝ բնութեանական կամ լաւ եւս
առարկայական բարութիւնն է, որ գեղեց-
կութիւն ալ կ'ըսուի՝ երբ առարկայի ձեր-
քերն ու կատարելութիւնը ծանօթացնող
գծերն ու գոյներն ցայտուն են և ակնապա-
րար ու հաճոյական են մտաց՝ իրենց ներ-
գաշնակ համաչափութեամբը։ Ըստ այսմ գե-
ղեցկութիւնն ալ իրականութեան աւելի ու-
րոշ ու միանգամայն գրաւիչ արտայայտումն
է. բարի է առարկայ մը, որուն կը հաւնոյնք,
գեղեցիկ է բարին, որուն ըմբռնումն իսկ
հաճելի է։ Ահա ասոր համար Պլատոն գե-
ղեցկութիւնը անուանեց ձեմարտութեան ցոլ-
էր. ուստի ինչ որ ճշմարտութիւնը կը ծա-
նօթացնէ մեզ և ախորժելի կընէ զբարու-
թիւնը, այն է իրօք գեղեցիկ եւ վայելուչ։
Գեղեցիկն անասնական հաճոյից գրգռն նկա-
տելով կը նուաստացնէր գայն։ «Գեղեցիկ
է (կ'ըսէ Կրկերոս) ինչ որ իւր իսկ զօրու-
թեամբը կը գրաւէ զմեզ առ ինքն, ոչ քի
յափօսակեղով իրմէ դուրս օգուտի (ըսէ նաև
հաճոյքի մը) սրբովը, այլ ձգելով առ ինքն
իւր վայելչութեամբը» (Ծրտ. յղ. գիւտր Բ.
ԾԶ)։ Վասնզի, կ'ըսէ նոյնը, «այն է գեղե-
ցիկ կամ վայելուչ, որ մարդուս ուրիշ գե-
ղասիրտէ կեր ունեցած գերազանցութեանը
կը պատճառէ» (յղ. պոշ. Ա. ՇԷ)։ Ինչ
չքեղ յանդիմանութիւն հեթանոսի մը բեր-
նով ամէն անոնց, որ զմարդն անասնոց գա-
սակարգէն ալ վար իջնցնելով նիւթի մշջ
ցեխոտելու ետեւէ են՝ քարոզելով թէ. «Գե-
ղեցկութեան գովութիւն մը բլլայ ամօթա-
ծութիւնը, որ մընչեւ հիմայ Երկնի սուա-
մեզ այնքան բասերէ մարմնոյ սոսկումով»
(Stern)։ Ամօթխածութիւնը գեղեցկութեան
գողութիւնը չէ՝ այլ անոր յարգանքը, պատ-
կաստը ու մարդավայել պաշտամունքն է
պիտի ըսեմ. այն զգուշութիւնն է որ մաք-
րութեան, կուսութեան ծաղիկը մայաւով
կը չըջապատէ, ինչպէս կ'երգէ Հոսիմայեցի
բանաստեղծը, որպէսզի ոտը կոխան չըլլայ
ամէն անցորդի և անսուրբ եղունգի հարուած
մը չիորոշուցնէ և ծաղկոյ գեղեցկութիւնը
չի խամրի։

(Շարունակելի)

ԵՐՈՒՍԱՂԷՍ

Ֆելէսթին մէմէթէթէթի իշխան էն զի-
յատէ ասորը մէմէթէթ օլան գասապա Գու-
սը Շէրիֆ տիր։ Պու մուգաստէս չէհր
տիւնեանըն չար աղթարընտա պուլընան
պիլճիլմէ Բրիսթիանլարըն վրյարէթկեանը
օլտուղընտան, իշպու գասապա հագգընտա
պիր մէմմուտա կէօրիւլէն մէգալէ թէլի-
սէն պուրայա տա նապլ օլունմըլ տրր։

Երուսաղէմ, տիւնեատաքի չէհր վէ գա-
սապալարըն էն պէնամը արը, չիւնքի բէք
գասալմ օլտուղը կիպը, մըթէմէտալին ագ-
վամըն տինի իլէ տէ ալագատար տըր վէ
լամի Բրիսթալը Մուգաստէստէ մէմթիւ-
տըր։

Երուսաղէմ վասըլ օլմագտան էվվէլ,
հէնուգ եափատա իքէն Գուտարն տիկէր
Սուրիա չէհրլէթիլմէ գըյասէն սընագ պիր
մէմէթէթ օլտուղը գանն խիլիւ իսէտէ,
թրէն իլէրիլէտիքօէ պու գանն պայլ օլուր
վէ հէվայը նէսիմի իլէ էթրափտաքի իւգիւմ,
ինծիր, չէֆթալի վէ սայիր մէյվէ աղաճա-
րընը իշթիվա իսէն պաղլար, պաղչէլէր
բուհա թապէ պիր հայաթ վէրր։

Երուսաղէմ երեքսէք թէթէլէր իւգէ-
րընտէ պընա խալմըլ օլուպ, էթրափընտա
տալը պիր թագըմ տէրէլէր վար արը։ Հէ-
վասը լաթիֆ վէ իգլիմը տէ գուլը արը վէ
պու շայանը թէաճըրպ տէյիլ տրր, չիւնքի
կիպսատա Սէյիւ սաթըն պարտան նէ գա-
տար երեքսէք իսէ, Երուսաղէմ տէ օ գա-
տար երեքսէք արր։

Գուտարն իշիլէճէք սուլը եալընըգ եալ-
մուր սուլը արը. մէնպալարը բէք նասիր
տրր։

Պու չէհր թէթէլէր իւգէրինէ պընա ի-
տիլմըլ իսէ տէ, պու կըն օ թէթէլէր պը-
նալարըն էթրթիւլմըլ արր։ Եհնի պընալա-
րըն իմթրտաա ըլտիլի չըմալ ճրհէթի մըս-
թէսաա թուլուլընա, Երուսաղէմըն հէր
թէրափը տէրէլէրէ մուհաթ արր։ Ծէնուպ
վէ գարպ թարափընտա հէնուլմ տէրէսի
վէ Եարգ ճրհէթրտաէ իսէ կէտրոն տէրէսի
վար արը։ Պու իքի վասընին մուհաթ օլ-

տուղը տաղլարն էն մէջհուրը Զէյթունըդ տաղը տըր :

Երուսաղէմ պիր սուր իլէ չէվիրիմիշ տիր քի պու սուրնն երւքսէքլիյի 38 գաւտէմ վէ մուհիթի իքի պուչըգ միլ տիր : Ասրլարտան պէրի սէքիզ գաբուսը վար տըր քի կէճէլէրի գաբանըր : Շէհրին սօգազլարը տար վէ պէօյիւք պիր գըսմը էսկի ասրլարա այիտ ուսուլտա զայրը մուսթազամ թաշլարլա տէօշէլի տիր :

Գուտու գառապասը անասըր իթիպարըյլա պիր գաշ մահալլէյէ միւնգասիմ տիր վէ էն միւհիմմ պինալարը մանասթըրլարլա , Գիլիսալար վէ մէզարըզլար տըր : Պու շէհր աւտէթա պէօյիւք պիր իպատէթկեսի իթլազընա սէզա տըր :

Երուսաղէմին թազրիպէն սօգսան պին նուֆուսը վար տըր , պուսլարըն ալթմըշ պինի մուսէվի , օն սէքիզ պինի իրիսթիան , օն իքի պինի տէ Միւսլիմ տիր :

Գուտսըն ասարը աթիպասը օ տէրէճէ չօգ տըր քի Գիթապշ Շէրիֆտէ , թարիխտէ վէ քիւթիւպը տինիյէտէ մէզքիւր օլմայան հէման հիշ պիր հէրի կօգ տըր : Պու ասարըն էն պէօյիւքիւ վէ էն միւհիմմի Ս . Յարուսթիւն Գիլիսալար իլէ Տաճար տըր :

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԻԼԻՍԱՍԸ

Պու Գիլիսա զայէթ գատիմ վէ ճէսիմ պիր պինա տըր . էսկի Գուտսը Շէրիֆին պիրազ շիմալ վէ զարպա մայիլ օլմագ իւզրէ թագքիպէն օրթասընտա քեային տիր : Պու քիլիսանըն գիյատէսիյլէ շիւհրէթ պուլմասը Յիսուս Գրիստոսըն Ս . Գերեզմանըն ինթիվա էթմէսինտէն տիր : Ս . Գերեզմանըն պու քիլիսա տաթիլինտէ պուլընմասը հագզընտաքի ըիվայէթ պէօյիւք Կոստանդիանոսըն վալիտէսի Հեզինէ Սուլթանտան գալմա տըր : Զիւնքի պու գրալիշա 336 սէնէյի միլատիյէսինտէ Երուսաղէմէ կէլտիյի վազթ , Գրլատոսըն գերեզմանընը արատը , Ս . Խաշը պուլար վէ իքի տէ քիլիսա պինա իթտիքի պուսլարտան պիրի տէ Ս . Յարուսթիւն Գիլիսալար տըր : Պու քիլիսա զայէթ ճէսիմ պիր պինա տըր , չէօյլէ քի Ս . Գերեզմանը ,

միւթէատտիտ քիլիսալար , մատուռլար , զիյարէթկեսալար վէ սայիրէյի ինթիվա խտէր : Պուսլարըն պիր գըսմը Լաթինլէրէ , վէ տիկէր գըսմարը տա Բուսլարա , էրմէնիլէրէ , Ղըպթիլէրէ վէ սայիրէ այիտ տիր :

Գիլիսանըն էօնիւնտէ իրի թաշլարլա տէօշէնմիշ պիր հաւլը վար տըր . պու հաւլըտան քիլիսանըն ճիհէթի ճէնուպիյէսինէ կիրիլի . օրատաքի գաբուսըն իւզէրինէ լաթինճէ վէ Արապճա եազըլար եազըլմըշ տըր : Գարուտան կիրէրքէն սօլ թարաֆտա , հիւքիւմէթ թարաֆընտան տուրաուրըլան Միւսլիման պէքճիլէրին իգամէթինէ մախսուս պիր հէր վար : Գարուտան կիրէն քիմսէ , էն էվլէլ միւրէպպա , միւսթաթիլ ետի աշագ ուզուս վէ իքի աշագ էնինտէ սարը պիր թաշ կէօրիւք քի պուսնա հաճար իւտտիւհն տէրլէր : Բիվայէթէ նազարէն էֆէնտիմիզին ճէսէսի պու թաշ իւզէրինէ գօնըմըշ վէ Նիկոգիմոս թարաֆընտան թահնիթ իսիլմիշ տիր : Ղարպա սօզրու 33 գատէմ մէսաֆէտէ տիկէր պիր թաշ վար տըր քի թահնիթ էնասընտա գատընլարըն օնուն էթրաֆընտա տուրմըշ օլտըզլարը սէօյլէնիր : Հաճար իւտտիւհն միւսթէլիֆ զէմանլարտա միւսթէլիֆ իրիսթիան գալմար թարաֆընտան թէմէլիւք իսիլմիշ տիր : Օն պէշինճի ասրտա Ղըպթիլէրին իտի , օն ալթընճը ասրտա էրմէնիլէրին (Կիւրճիլէրին) օլտու վէ Լաթինլէր օնուն իւզէրինէ գանտիլ եագմագ հագզընա սահիպ օլմագ իչուն օ տէվիրտէ պէշ պին զրուշ վէրտիլէր : Սօնրա պու թաշ Բուսլարա ինթիպալ իթտի իսէ տէ , տիկէր միլլէթլէրին օնուն իւզէրինէ գանտիլ վէ մուս եագմագ հագզը պազի գալտը : Հաթթա պու կիւն պիլէ կէօրիւք քի պու թաշըն իւզէրինէ էրմէնիլէրէ , Լաթինլէրէ , Բուսլարա վէ Ղըպթիլէրէ այիտ օլմագ իւզրէ պիր չօգ գանտիլէր ասըլը տըր :

(Մապաւի վար)

ՏԵՍՈՒՆ ԿՈՄԻՏԵԱՍԱՅ ՔԱՆԱՆԱՅԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆՑԻՈՑ

ՈՐՔ ՅԱՐԵԱՆ Ի ՎԵՐԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԻԻՐԵԱՆՑ

ԵՒ ՀԱՆԻՆ ԶՆԱ Ի ԳԱՀԷՆ ՎԱՍՆ ՄՈՒՑԹՈՒՆ

ՈՐ ԵՒ ՍՊԱՆԻՆ ԶՆԱ

(Շար.)

Եւ յանցանել Ուրբաթուն, և ի շաբաթի՝ ի հաւասարի յաւուրն յանկարծակի ել աղաղակ և շփոթումն մեծ յոյժ ի Կ. Պօլիս, եւ զորո՞ տուեալ ռամկին աճապարեալ փութային աստ եւ անդ ժամանեալ ի հաղածախ տեղիս: Փակեցին զգրուես քաղաքիս, եթէ՛ ի ծովու եւ թէ՛ ի ցամաքի կողմանցն, թէ՛ պէտ յառաջագոյն ի ցամաքի կողմն եղեալ գրուեսն պահէին Պօստանճիք հանգերձ զինուք. եւ ոչ թայլ տային ումեք ելանել ի քաղաքէն: Եւ յորժամ պատահէր ննջեցեալք առ ի թաղել զգորս արս եւ զքահանայ մի հրամայէին ելանել ննջեցելովքն արտաքոյ քաղաքին, եւ զայլն յետս դարձուցանէին: Իսկ յարտաքուստ եկելոց արանցն ի քաղաքս, խուզեալ որոնէին զնոսա վասն թղթի, եւ առեալ տանէին զնոսա յէթմէյտան եւ հարցափորձ լինէին, թէ ուստի՞ գայցէրն եւ կամ առ ո՞ երթայ: Եւ իբրեւ ստուգիւ լուան սոքա եթէ ի յետէնէ թագաւորն զգորս գրէ՝ եւ զնէֆերամ հրամայեալ է եւ զոռճիկս քաշխէ՛ նաեւ զֆէթվայս առեալ ի մուֆթուն զի առաքեսցէ զգորսն յիստամպօլ առ ի կոտորել զնոսա մինչեւ ցեօթն սարեկանսն՝ ապա եւ սոքա եւս սկսան այսուհետեւ գրել զգորս կեօյուլիս, զսերսէն կէշիս¹ եւ զպետս նոցունց: Իսկ ի գիր արկեալքն բաժանեալք ի նոցանէ եւ եկեալ բանակօք եւ զինուք ի Եհնի-պաղչայ կոչեցեալ տեղին զհտնդէին վրանօք, եւ օր ըստ օրէ առատանային եւ նստեալ մնային անդ զաւուրս ինչ, եւ զպատարաստութիւն պատերազմի գնէին զզէնս եւ զսուսերս: Իսկ ի կիրակի օր Յուլիսի ութեւտամն, առաքեալ ի թագաւորէն ոմն իշխանութեամբ Խմրահօր, որ եկեալ ի քաղաքս, սակա տեղեկանալոյ խառովութեանս, որ եւ

տեսեալ զպատրաստութիւն սոցա եւ զմիաբանութիւն եւ եղեւ ըմբռնեալ ի սոցանէ, վասն որոյ ետ սոցա պատանդ զերկուս որդիսն իւր. քանզի սոքա ոչ կամէին արձակել զնա, եւ իբրեւ առին զգրաւն եւ ետուն նմա կրկին արդ եւ մահաար եւ առաքեցին առ թագաւորն, եւ սպասեալ մնային դառնալոյ նորա ի թագաւորէն: Եւ եղեւ զի յաւուրս յայտարար վայր յետէնու ոմն Մուլայ փեսայ Մուֆթուն՝ առեալ զպատրաստութիւն քաղաքիս, եւ լուեալ զաղմուկն որ ի քաղաքս ի ճանապարհին. եւ անդ ի չիֆթլիկս զօդեալ թաքեալ:

Իսկ սոքա իբրեւ իմացեալ զայն տեղի յուլիսի քսան եւ մի չորեքշաբաթի յերեկոյն, եւ զանխուլ յումնքէ գնացեալ գտին զնա եւ կալեալ կապեալ բերին ի գիշերի ի քաղաքս եւ եղին ի կալանս: Բայց վերոյգրեալ Խմրահօրն որ պնաց առ թագաւորն այլ ոչ դարձաւ, այլ առաքեաց զոմն իւրոց սպասաւորաց Խտամպօլ առ ժողովս սոցա հանգերձ թղթովն իւրով, յորում գրեալ էր այսպէս: Եթէ զգիրս ձեր մատուցի առ թագաւորն, եւ պատասխանույ երբէք ոչ արար արժանի եւ ոչ ինձ թոյլ ես յելանել աստի: Դի թէպէտ ես ինքնին խոստացայ դառնալ առ ձեզ: Վասն որոյ ահա առաքեցի զսպասաւորն իմ առ ձեզ թղթով իմով ծանուցանել ձեզ. եւ ահա երկու որդիքս իմ առ ձեզ են եւ զոր ինչ կամեք առնել դոցա՝ արասջիք, կամք ձեր եղիցին. քանզի անպարտ եմ առաջի Աստուծոյ, քանզի կախարդութիւն ոչ գոյ յիս, ողջ լերուք: Եւ իբրեւ ընթերցան սոքա զգիր Խմրահօրին՝ զորդիս նորա ոչ սպանին. բայց առաւել եւս բորբոքեցան ի բարկութիւն, եւ տեսանէին զպատրաստութիւն պատերազմի եւ յեղանելոյ ի ճանապարհ:

Եւ յորժամ լուան մայրն եւ քոյրն թագաւորին, եթէ ո՛չ կասին զօրքն Խտամպօլու. այլ պատրաստ զողով զալոյ են ի պատերազմ՝ մտին առ թագաւորն եւ աղաչէին զնա ասելով, ո՛վ թագաւոր, արդ տուր նոցա զՀօճայն քո, եւ մի՛ զմեզ ի մահ վասն նորա: Ասէ թագաւորն, ես ոչ տամ զՀօճայն

¹ Կեօնիլիլ, կամուր. Սերսէն կէշի, զօրաց դաս մը, որ պատերազմի ժամանակ առաջին գծին վրայ կը կենայ:

իմ ի ձեռս նոցա: Ասէ ցնա մայրն հանդերձ արտասուելով, ո՛վ առիւծ-որդեակ իմ, ես զիմ մահս եւ զմեռանիլս բնաւ ոչ հոգամ. զի անցեալ է ժամանակ իմ, եւ ոչ զմահն քո հոգամ իսկ. բայց ի վերայ տղայոցն քոց յոյժ աղէկիզեալ տոչորի եւ այրի սիրտ՝ իմ, որ որբ մնալոց են, եւ առանց այցելուի. վասն որոյ տուր զՀօճայն քո:

Եւ մինչ մայրն լալով զայս ասէր՝ յայնժամ անկեալ յոտս թաղաւորին կանայքն եւ որդիքն գոռալով լային: Եւ ապա հրամայեաց թագաւորն զի ի Վառնայ աքսորեացեն զմուֆթին. իսկ մուֆթին իբրեւ հոռի թէ հրաման ել ի թագաւորէն աքսորել ի Վառնայ՝ ազաչեաց զթագաւորն զի հրաման տացէ զի անտի անցանիդէ ի Տրապիզոն, եւ հրամայեաց զի անտի ի Տրապիզոն անցցէ: Եւ ելեալ Մուֆթին յետքէնու՝ փութապէս կամէր հասնել ի Վառնա. բայց վէզիրն Րումի ալ իմն հրաման տուեալ ի ձեռս ալոց չաւուծաց զի ի ճանապարհին յամեցողցանելով տարցեն: Եւ մինչ հասին ի Վառնա կամէր իսկոյն մտանել ի նաւ եւ անցանել յայն կողմն ծովուն: Սակայն վերակացու չաւուծքն բանս եղին ընդ նաւապետն ի ծածուկ թէ մինչ մէքամէթ¹ ոչ լիցի նաւ քո, եւ մինչ ոչ իւղիսցի, ոչ կարեմք գնալ, եւ պատճառելով յամեցողցանէին:

Եւ յետ աւուրց ինչ եկն հրաման ի վէզիրէն զի արգելեցին զմուֆթին ի բերդն: Եւ ուրտարն եւ գատաւորն պատճառելով ի պատիւ հրաւիրեցին զմուֆթին եւ մինչ մուծին գնա ի բերդն վասն գթօտանաց, եւ անդ հոռցին զֆէրմանն վասն արգելմանն իւրոյ եւ արգելին ի բերդն:

Եւ յետ մտանելոյ նմա ի բերդն՝ զարձեալ հրաման եկն ի վէզիրէն եւ զօրք ընդ նմա, զի հանցեն զՄուֆթին ի բերդէն եւ զօրքն սակաւ սակաւ չրջեցուցեն գնա ընդ Ռումիէ լիաւ աստ եւ անդ: Բանդի այսու դիտաւորութեամբ չրջեցուցանէր Րումի վէզիրն զՄուֆթին զի գոնէ ի գալ զօրացն իստամպուրու եւ ի խնդրելն գնա ի նոցանէ, տացէ

զՄուֆթին ի ձեռս նոցա եւ այնու խաղաղութիւն լիցի: Բայց տունն Մուֆթուն որ յետքէնէ, զգուռն չղթայիւք կապել ետ թագաւորն զի մի ոք մտեալ ի ներս յաւար հարկանիցէ յնչից նորա. և չրջապատեալ զօրուք եւ զինուք պահէին զտունն: Եւ յայսմ վայրի ի քաղաքս Ստամպուլ օր ըստ աւուրց խօսք եւ զրոյցք յորդեալ յաւելոյր զբաղաւորեալ բաշադմուռնս պէսպէսս եւ զայլանդակս, զորանս մարթ էր ի գրի արկանելն, մանաւանդ խողացն ձանձրութիւն իսկ. վասն այն ոչ գրեցան: Արդ ի Յուլիսի քսան եւ ինն Հինգշաբթի օր սկիզբն արարին սոքա ելանել ի քաղաքէն՝ մինչ ի կիրակի որ էր Օգոստոս յամեոյ մուսն:

Նախ եւ առաջ ելին Էմիրքն հանդերձ սանձազօքն իւրեանց: Երկրորդ՝ Նէնիչէրեաց աղայն եւ զօրքն ընդ նմա: Երրորդ՝ Սէրտէն կէշուրն՝ պայրաղովքն իւրեանց. և Սէրտէնկէշուի աղայքն ընդ նոսա: Զորրորդ՝ ի Սպահեաց չորս աղայքն՝ և Սիփահիքն պայրաղովք ընդ նոսա: Հինգերորդ՝ Ճէպէճի պաչին, և ճէպէճիքն ընդ նմա պայրաղովք: Վեցերորդ՝ Թօփճին, և Թօփճի պաչին ընդ նոսա: Եօթներորդ՝ Պօտոմանճի պաչին, և պօտոմանճիքն ընդ նմա: Ութերորդ՝ Վէզիր աղէմն, և իւր զօրքն ընդ նմա, միահամուռ ամենեքեան ելին ի քաղաքէս և գնացին յետքէնէ: Եւ ասի յոմանց եթէ գումարեցան զօրքն ամենայն ուրք ելին ի վերայ թագաւորին իւրեանց՝ եօթանասուն հազար այր: Եւ յալոց եթէ էին՝ հարիւր և երեք հազար արք պատերազմօղք ուրք ելին պատրաստութեամբ մեծաւ, այսինքն հարիւր և յիսուն թօփով և հազար հինգ հարիւր կառօք բարձեալ զգէնս և անչափ թի և փայտատ բարձեալ ի յուղոս, և բազում զանձայս¹: Իսկ յետ ելանելոյ զօրացն ի քաղաքէս՝ փակեցին զգրուռնս քաղաքիս, բայց զհինգ գուռնս ի կողմն ծովու բաց թողին, և զերկուս գուռս ի ցամաքի: Սակայն ի բաց եղեալ գրուռքն չորս և հինգ տեղիս զպաշտպանս եղին զօրս Նէնիչերեաց հանդերձ կուռն զինուք, որք պահէին զցայգ և զցերիկ: Եւ յարտաքոյ

¹ Եօթուգութիւն:

¹ Գանձաւ, ճանկ:

կողման նոր պալատին արքունական՝ յորոց զորոնան փակեալք էին, և յառաջի պարսպացն ի Սարայ-Պուռնի կոչեցեալ տեղոյն, մինչ մերձ ի Սինան փաշայ քէօչկէն որ մերձ է ի Պաղչա-Ղափիսին, զորքն Նէնիչարեաց օտայիւք նստէին եօթն եւ ութ տեղիս հանդերձ զինուք իրել մուգասերէ¹ արարեալ, պաշարեալ, պատսպարեալ պահէին զգուշութեամբ զտիւ եւ զգիշեր: Այլ եւ հրաման ել զի ի տունս Հոռոմոց որ ի քաղաքս Հայոց եւ Հրէից եթէ եկաց եւ թէ բնակաց, մի՛ եւ եթ զէնք գտանիցին: Եւ եթէ ոք ունիցի զզէնս, զայն բերցէ առ մեզ, եւ եթէ կամաւ ոչ բերցէ եւ յետ աւուրց ինչ յորժամ խուզեալ որոնեսցուք եւ գտանիցի տունս կամ՝ յօտայս ուրուք, եթէ ի խանութա՝ զնոսա կախել հրամայեցաւ: Վասն որոյ յամենայն ազգաց Քանանայք եւ իշխանք եւ Հրէից խախամքն եւ ժողովրդապետք, ժողովեալ իւրաքանչիւրքն յազգաց իւրեանց, և տարեալ ետուն գատաւորին որ ի քաղաքս, զայս իր երկրորդ անգամ արարին, պատճառելով եթէ պիտոյացան մեզ զէնք, և վասն պակասութեան զինուց մերոց՝ խնդրեմք ի ձէնջ: Բայց մեք հետաքրքիր եղեալ վասն գործոյս, և վերահասութեան զինուց ժողովեցին զզէնս յայլոց, այլ վասն կարծեաց երկիւղի ի Քրիստոնէից: մի՛ գուցէ ընդ դատարկանալ քաղաքիս ի զօրաց և ի զինուց՝ սոքա միաբանեալ ընդ միմիանս և զզուխս ամբարձեալ յարիցին ի վերայ մեր եւ կոտորեսցեն զմեզ: Քանզի զՅունաց պատրիարքն եւս երաշխաւոր առին վասն ազգին իւրոյ եւ ի Հրէից վասն այն ժողովեցին զզէնս՝ զի մի յայտ լիցի ծածկեալ խորհուրդն նոցա, զի եթէ ի Քրիստոնէից միայն ժողովէին՝ յայտնապէս երեւէր եթէ վասն երկիւղի ժողովեցին: Աստանօր տե՛ս, եղբայր, զանմտութիւն, որ ոչ ի միտածին զայն որ երկու ամ է եւ աւելի, որ ազգն Հայոց զմիմեանս մասնեն Տաճկաց ասելով թէ՝ սա թողեալ զՀայութիւնն՝ Հոռոմ եւ Ֆրանկ դարձեալ է. եւ դարձեալ ասէին

բարեոք է Տաճկանալ քան թէ Հոռոմ եւ Ֆրանկ դառնալ: Թէպէտ և մեք զայս դառնալս թէ Հայք որպիսի կերպիւ կարեն Հոռոմ եւ Ֆրանկ դառնալ, ապա ո՛ւր մնաց այլազնեաց կարծիքն եւ երկիւղն: Թէ Քրիստոնեայք միաբանին եւ զօրանան ի վերայ մեր: Թող Հայք պոնէ ընդ ազգս իւրեանց միաբան լինին, որովհետեւ զմիսս միմեանց ծածկեն եւ ծառքեն, ուրացող եւ հերձուածող սնուանելով: ապա ո՛ւր եւ կամ երբ մարթիցի ընդ Յոյնս և ընդ Լատինս միաբանել: տեսե՛ր արդեօք զքաջ զիմաստութիւն Տաճկաց՝ որք զմիաբանութիւնս Քրիստոնէից կարծեն՝ օտար գալով, եւ սոքա ընտանի հաւատոյ զմիաբանութիւնս ոչ կամին:

(Շարունակելի)

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

ՄԱՐՈՒՔՔԻ

Անցեալ քուով հրատարակեցինք Ամենօրեայ Հաղորդութեան ոչ միայն պաշտօնութեան, այլ նոյն իսկ կերպով մը կարեւորութեան մասին Ս. Աթոռոյ 1905ին տուած մէկ վճռոյն քարգմանութիւնը:

Այս ապաշխարութեան սուրբ օրերուն առթիւ եւ Ջանկական Հաղորդութեան իբր պատաստութիւն կ'ուզենք այս Ս. Խորհրդոյս նկատմամբ ինչ աւանդութիւններ փափր ի շատ պայտել, յօգուտ մեր հաւատացեալ ընթերցողներուն, ամենահաճոյական եւ գրաւիչ ուսումնասիրութեամբ, որոնց համար՝ վստահ ենք, ընթերցող՝ ընդհանրապէս իսկ պիտի մնան:

Ամենասուրբ Խորհուրդն Գոհութեան (Eucharistia) կամ Ս. Հաղորդութիւնը (Communio) Քրիստոսի Տեսուն Մերոյ փրկարար զործողութեան կեդրոնն է. իր ամենամեծ Աստուածային պարգեւն է որով հոխացուց իր Ս. եկեղեցին: Անհասկացելի է ան մարդկեղէն մտքի, սակայն եւ այնպէս ամենաքանկազին գտնա մըն է, զոր միայն Աստուած մը կրնար մտածել ու պարգեւել: Քրիստոսի Աստուածութեան բացայայտ նշաններէն մին է այն:

Անոր բացարձակ Խոստումը (Յովն. 2.) եւ Աստուածային նշանակութեամբ Հաստատութեան (Մատթ. 26-28, Մարկ. 14. 22-24, Դուկ. 14. 19-20) անվիճելի նշանաւորութիւնը կը ցուցադրեն Աւետարաններէ հակառակ բողոքականաց ամբարիտ ուրացումներուն: Նոյնը կը հաստատէ Առաքեալն Պօղոս Ա. Կոր. 10. 15-16, մանաւանդ ԺԱ. 23-29:

Այս անարատ հաւատքը Ս. Կաթողիկէ եկեղեցին

¹ Մուհասէրէ, պաշարուն:

անփոփոխ դաւանեցաւ միշտ եւ հաճապագ. բոլոր հե-
րեթիկոսական անօրէնութեանց դէմ պաշտպանեց զայն
իր ժողովներով, իր անյեղի վարդապետութեամբ եւ
Ս. Քանանայապետաց անսխալ ուսուցմամբ: Իր երկ-
նաւոր վարդապետ, իր զանձը, Ասուծոյ անաւառ
Դաւոնը, պանդուխտ հաւատացեալներու միակ ուրա-
խութիւնը, աստուածաբան անպատեհի միփարտութիւնը,
հոգեվարներու յոյսը, յաւիտեական երանութեան միակ
առաւելայն եղող Ս. Խորհուրդը պաշտպանեց միշտ Ս.
Եկեղեցին՝ սրբապիղծ ձեռներու դէմ:

Միեւնոյն հաւատքը սիրած է բաւական դարեւէ ի վեր
անընդհատ: Նախկին դարերու, երբ Քրիստոնեայք ա-
հաւոր հալածանքներու ենթարկուած էին, շատագու-
կանովէն կրօնը զբաղիլ, այլ մտնաւանդ կ'աւելաւէին
«Չնեայ իրենց սրբութիւնները՝ օրհնելու, եւ ի-
րենց մարգարիտները չձգել խոգեալ առջեւ»:

Հաւատոյ տոյն հիմնադրի դարերուն մէջ ալ անդի-
մադրելի ապացոյցներ կան թէ Ս. Հաղորդութեան վրայ
միեւնոյն հաւատքը կը դաւանէր Ս. Եկեղեցին:

Մենք յօժարութեամբ պիտի օրհնէինք այժմ մեր պա-
ռական ընթերցողներուն՝ յայտ մատնելու հնախօսա-
կան ապացոյցներ, զորս համառօտիւ բաղած ենք հրո-
շակաւոր հնախօս Մարտիրոսի. ապա, հոգեւոր Տէր կա-
մեացի, պիտի աւելաւորէինք զանաւոր Աւարդապետական
ապացոյցներ:

Այդ ուսմունք Տէրամբ կը հաստատեն զմեզ մեր
դաւանած Ս. Հաւատքին մէջ եւ կը ծառայեն արծար-
ծելու մեր շերտեղանդութիւնը եւ կրկնապատկելու մեր
միփարտութիւնը այս ապականեալ եւ յաւեւ յուսահա-
տող աշխարհին մէջ, որ, ինչպէս ըսաւ Յիսուս, «Ի չա-
րին կայ»:

Ունիմք մենք Էմմանուէլը, բաղք Փրկիչը, որ միշտ
մեզի հետ եւ ի մեզ կը բնակի: «Ձի Ստուած ընդ
մեզ է»:...

ԽՄԲ.

Այս կարեւոր նիւթը Քրիստոնեայ գի-
տուն հնախօսներէ շատերը զբաղեցուց: Ա-
նոնք արդէն ի վաղուց հերետիկոսներու ամ-
բաստանութեանց դէմ Եկեղեցւոյ վաղեմի
յիշատակները (monuments) մանաւանդ գետ-
նաբաններունը յաղթանակօրէն ի վեր հանե-
ցին, ապացուցանելով այսու որ կաթողիկէ
հրամանակարգ վարդապետութիւնը (dogme)
Յիսուսի Թրիստոսի հարազատ վարդապետու-
թեան վատառողջ այլափոխումը չէ:

Որչափ աւելի խորապէս ուսումնասիրուի
նախկին Եկեղեցւոյ պատմութիւնը, այնչափ
բաց է բաց կը մերժուի հին ամբաստանու-
թիւնը զոր յառաջ կը մղէին Լուտերը եւ իւր

աշակերտներն՝ քրիստոնիկ ջատագովական-
ներով, և գետնադամանները իրենց մութ
սրահներով, նկուղներով, նորուղիներով (ga-
leries) անվիճելի հեղինակութեամբ մը մեզ
կ'ապացուցանեն որ հալածանաց Եկեղեցին
այսօրուան Եկեղեցիէն տարբեր հաւատք մը
չունէր և ոչ տարբեր եղանակ մը գործելու:
Հոն է, այն գերամեծար ստորերկրեայ սըր-
բավայրերու մէջ, մարտիրոսաց ժամանակա-
կակից այն նկարներու և այն արձանագրու-
թեանց առջեւն է որ ինքզինքնիս կը զգանք
ճշմարտապէս առաջին Քրիստոնէից սերունդ-
ները, անոնց հարազատ ժառանգորդները և
անոնց Հաւատոյ ու Սիրոյ գործին շարունա-
կողներ:

Ստուգիւ նոր բան մը չէ այն նիւթն ո-
րուն վրայ կը խօսիմ բայց քրիստոնէական
հնախօսութեան ընդարձակ դաշտին մէջ
հետզհետէ աճելու վրայ եղող ուսմունքներն
թոյլ կուտան մեզ անցելոյն մէջ ճանչցուած-
ներուն վրայ նոր յիշատակարաններ և ա-
պացոյցներ եւս աւելցնել զորս եւս նշանաւոր
Տէր Ռօստիյի ստուած կանոններուն համաձայն
պիտի պարզեմ ու դասակարգեմ, որուն ա-
շակերտներէն մին ըլլալու պատիւն ալ ու-
նիմ: Այս ամենակարեւոր նիւթին վրայ ինչ
որ նաւ սորվեցուցած է, եւ պիտի համառո-
տեմ և ամենանոր գիւտերու ինձ թելադրած
քանի մը դիտողութիւններն ալ պիտի աւել-
ցնեմ:

Բայց այս յիշատակներու դաստակերտա-
կան մասին վրայ ի մասնաւոր խօսելու չի
սկսած, պէտք է նախ անցողակի կերպով
յիշեցնեմ առաջին դարերու մէջ աւետա-
բաններէն, Գործք Առաքելոցէն, և Ս. Պօ-
ղոսի առ Կորնթացիս գրած թուղթէն ետքը,
քրիստոնէական առաջնակարգ մատենագրու-
թեան ամենահին վաւերագիրներու Ամենա-
սուրբ Հաղորդութեան վրայօք մեզի հաղոր-
դած թանկագին վկայութիւնները:

Այս իմ ակնարկած վաւերագիրներու ա-
մենահինը սակայն, այս ամենամօտ ժամա-
նակներու մէջ գտնուած է, և է ան հոգա-
կաւոր «Վարդապետութիւն Առաքելոց»ը զոր
1883ին գտաւ Պոլսէնիոս Կ. Պոլսոյ ձեռա-

գիր մատենանի մը մէջ, և զոր քննադատները կը վերագրեն առաջին դարու: Երկու մասէ կը բաղկանայ այն որուն մէջը քրիստոնէականի գրքոյկ մըն է, եւ երկրորդն արարողական մատենիկ մը: Այս վերջինս պատարագամատոյցներու ամենահինը կրնայ կոչուիլ. հոն կ'աւանդուի պատարագի Զոհին, ա'յնպէս որպէս կը մատուցուէր նորածին եկեղեցւոյ սկիզբները: Այս գրքին արարողական երեք գլուխներն են՝ իններորդը, տասներորդը և չորեքասաներորդը ուր կը նկարագրուի արարողութիւնը (կամ պատարագը) որ այն ատեն տակաւին Առաքելոց ատենուան պէս Ագապին¹ միացուած էր: Այս սովորութիւնը Ս. Պօղոսի առ Կորնթացիս ծանօթ յանդիմանութեան առիթ և պատճառ տուաւ, որովհետեւ Ամենասուրբ Հաղորդութեան յայտնի բացայայտ ակնարկ մը ընելէ յետոյ, կ'աւելցնէ. «Եւ երբ կշտացած պիտի ըլլաք, այսպէս գոհութիւն պիտի մատուցանէք»: Ուստի ահա այս պարագան կ'օգնէ մեզ հաստատելու ինդրոյ տակ եղած վաւերագրին ժամանակն ալ, որովհետեւ անտարակոյս է որ երկրորդ դարու սկիզբէն արդէն Ագապը Գոհութեան Խորհրդոյն արարողութիւնէն բաժնուած էր: Առաքելոց վար-

դապետութեան չորս մասերը մասնաւորապէս գոհութեան խորհրդոյն հետ յարաբերութիւն ունին: Առաջինը կ'աւանդէ արարողական ժողովի. «Երբ ժողովուիք կիւրակէ՝ տէրունական կամ Տիրոջ օրը, որպէս զի զոհերնիդ սուրբ ըլլայ, մեղքերնիդ խոստովանելէն յետոյ, հացը կոտորեցէ՛ք և գոհութիւն մատուցէ՛ք»: Վերջը եկող սա նախադասութիւնը «Ինչ որ սուրբ է՝ շուներուն մի տաք», կ'արգիլէ անոր սրբապղծութիւնը. նոյն սոյս բառերը երկրորդ դարուն հեղինակներուն քով եւս ճիշդ Գոհութեան Խորհրդոյն յատկացուած կը գտնանք:

Երրորդն ազգարարութիւն մըն է, որ Հաղորդութենէն անմիջապէս յառաջ պէտք է ի գործ դրուի. «Սուրբ եղողները զիրենք սուրբ պահեն և չեղողները զղջան»:

Վերջապէս հոն կը կարգադրուի աղօթքը որ կրնայ շնորհակալութեան ներգործութիւն նկատուիլ. «Դու ո՛վ Տէր, որ ամէն բանի Արաքիչն ես, մարդկանց սնունդ մը և ըմպելիք մը տուիր, որպէս զի ասոր համար քեզ գոհութիւն մատուցանեն, և դու սնունդը, ըմպելիքը և յաւիտենական կեանքը քու որդւոյն միջոցաւն է որ կուտաս»:

Բայց այս արարողական գրքոյկին մէջ զարմանալի է ամենաէական մասին, այն է սրբագործութեան և Տեառն Մերոյ հանդիսաւոր բառերուն բացարձակ բացակայութիւնը, զորս Ս. Պօղոս իւր թուղթերուն մէջ կը յիշէ, և քիչ ժամանակ յետոյ Սուրբ Յուսափնոս կը կրկնէ:

Այս բացակայութիւնը չկրնար մեկնուիլ եթէ ոչ «Առաքելոց վարդապետութիւն» գրքոյկին անկատար բան մը ըլլալը ընդունելով և ենթադրելով որ այս ամենատարազան մասը, որն որ հաւանականաբար բերանացի պէտք էին արդասանել, մասնաւոր զանց առնուած է: Այս զանցառութեան պատճառը կրնար ըլլալ «Գաղսնիքի օրհնիք» որ երկրորդ դարուն սկիզբը արդէն ամենուրեք գոյութիւն ունէր և գուցէ այս թուականէն առաջ ալ հաստատուած էր: Աթենագորաս 177ին անոր նկատմամբ այնպէս կը խօսի իբրեւ թէ արդէն հին օրէնք մը ըլլար և Ս. Յուստի-

¹ Ագապ (agape) որ Յունարէն բառ է և կը նշանակէ սէր, այն սեղանն է որուն վրայ նախկին քրիստոնէայք ի միասին կ'ուտէին, ի յիշատակ Յիսուսի վերջին ընթրիքին. առ հասարակ կիրակի օրերը կը արուէր այդ սեղանը, որուն կը մասնակցէին ամեն գասակարգի մարդիկ. իւրաքանչիւր ոք ըստ իւր կարողութեան բան մը կու տար. հարուստները կը վճարէին աղքատներու ակօղ: Ի սկզբան անդ Ագապէն վերջը կը հաղորդուէին՝ Աւետարանի պատմութեան համաձայն. բայց երկրորդ դարու մէջ՝ երեկոյեան ընթրիքէն վերջուցին Սուրբ ընթրիքը և՛ զայն միացուցին ցրեկուան պաշտամունքին և սովորութիւն հաստատուեցաւ ծովապահ ընդունելու Ս. Հաղորդութիւնը: Հետ անոնները այն գի երային գումարուաներուն ամենավատթար մեկնութիւններ կուտային՝ իբրեւ պատրուակ անխառնութեան շուայտութեանց, առանց կարենալ թափանցելու անոնց սրբազան նշանակութիւնը: Զորրորդ դարուն վերջերը (397) Կարկեդոնի ժողովը դադարեցուց այն սովորութիւնը որպէս զի թշնամիք և ոչ իսկ ամբաստանութեան պատճառանք մը կարող ըլլան գտնել: Օրհնած հացի բաշխումը Ագապի յիշատակութիւն մըն է:

նոս իւր ջատապուժական քանի մը տեղերը զայն կ'ենթադրէ (Ա. 3, 61), Պլինիոսն ալ, բաց աստի, իրեն նամակներէն միոյն մէջ ասոր կ'ակնարկէ. բոկլով որ իւր առջեւը տեղի ունեցած յրիստոնէից պատերուն մէջ գաղանիքի մը հանգիպեցաւ:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՍՆԷՒ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՇՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՆԷՒ“ ԳՐՔԷՆ

Գրք Ա.—Գլ. ԺԺ. — Բարի կրօնաւորի մը հրահանգացք գրայ:

Մեր առաքաղարքեան հստակման հ' մեր յառաջդիմութեան ընթացքի. եւ ո'վ որ աղէկ յառաջդիմելի կ'ուզէ, պէտք է որ մեծ փոյթ ու հոգ ունենայ:

Երե հասաստակաւ առաքաղարդն անգամ *vskay* կը քերական, ի՞նչ կ'ըլլայ անիկա որ ի՞նչ անգամ կամ վերի վերոյ կ'առաքարէ:

Սակայն մեր առաքաղարքիներ զանազան եղանակներով կը յսնեն, եւ հոգեւոր հրահանգաց ամենափոքր զանգատութիւնն իսկ առանց մեկ վնասու չ'անցնիր:

Արդարաց առաքաղարքիներ զիստաւարտ Աստուծոյ շնորհաց վրայ հիմնուած հ' քան թէ անիկն իմաստաւորական վրայ. անոր համար ինչ քանի որ մեծ գարնեմ, իրենց յոյսն ու վստահութիւնը Աստուծոյ վրայ կը դնեն:

Վասն զի մարդս կ'առաքարէ, իսկ Աստուծ կը կարգարէ. եւ մարդս իր նախնուն տէր չէ:

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԶԱՅՐԱՊԷՏ

Ս Սահակ, որդի Մեծին Ներսէսի, վերջին շաաւաւիդն է Ս. Լուսաւորչի օրհնեալ տոհմին Մանուկ հասակին մէջ մահը զրկեց զինքը իր ժողովէն, որ Մամիկոնեանց անէն էր եւ կը կոչուէր Սանդուխտ: Իր հօրը քով կրթուեցաւ եւ շատ յառաջ գնաց աստուածապաշտութեան եւ ուսման մէջ: Մայրենի լեզուէն զատ սորվեցաւ յունարէն, ասորերէն եւ պարսկերէն. բայց ամէն բանէ աւելի հմտացաւ Ս. Գրքաց ուսման:

Երբ Մեծին Ներսէս հայրապետական ամբարբարձացաւ, Սահակ սերտ սիրով եւ յարաբերութեամբ կապուեցաւ Ս. Մեսրոպի հետ, որ հայրապետանոցին նստարան էր: Այս երկու սքանչելի մտքերը միարան աշխատակցութեամբ յառաջագէժ վարդապետ իմաստաւորութեան եւ աստուածային գիտութեանց մէջ:

Երբ Սահակ շափահաս եղաւ, շատերուն ստի-

պումովը աշխարհք մտաւ. որպէս զի չըլլայ ի՛նչ Լուսաւորչի տոհմը մարի, քանի որ ինքը մինակ մնողեր էր նոյն տոհմէն. մանաւանդ որ ամբողջ ազգն ալ կը փափագէր որ Լուսաւորչին զաւակները բազմին: Միշտ հայրապետական ամբարձին վրայ: Ասոր համար Սահակ օտէպ Աստուծոյ կը խնդրէր որ իրեն մանչ գաւառի մը պարգեւէ: Աւստի երբ Սանդուխտ Սահակոն ուղարկեց Երեւանի գաւառի մը բերելէ յետոյ ամուսն: Եւսն մտանուեցաւ, Սահակ սկսաւ տիրիլ եւ մաստաւը ջուլթեան մէջ իյնալ:

Այս միջոցին տակաւին սարկաւագ էր: Աւագ Հինգրործի օրը սուրբ պատարագին սպասաւորեց, հաղորդուեցաւ եւ հացով, աղով ու ջրով անցուց: Երեկոյեան ժամերգութեան յետոյ եկեղեցին կեցաւ, գիշերային պաշտման քին պատարաստուելու համար: Երբ Սահակ Սուրբ Սեղանին ծառ նստած էր, յանկարծ վրան թմբութիւն մը ինկաւ. հրաշալի տեսիլք մը ունեցաւ եւ ապա լուսադեղ հեռեալի մը երկինքէն իջնելով փարատեց մանչ գաւառի շունենալուն համար զգացած ընդունալն ցաւը. եւ մեկնեց տեսիլքին իմաստը. ծանոյց Լուսաւորչի տոհմին հայրապետութեան գաղարուծք, Արշակունիաց ասն թագաւորութեան վերջանալը եւ ապագային հայ ազգին կեանքի հայրածանրները եւ ազատները, ինչպէս որ կը տեսնուի Ս Սահակայ տեսիլք բաւած գրած քին մէջ:

Սահակ այս ահաւոր տեսիլքէն վերջը միթիւթաւուած զգաց ինքզինքը, եւ փառք առաւ Աստուծոյ որ արժանի ըրաւ զինքը այսքան մեծ շնորհքի մը: Այնուհետեւ արան հոնեց ամէն աշխարհային հոգերը եւ ինքզինքը առաւ բարեպաշտական գործերու եւ մտածումներու:

Իր բարեպաշտ կեանք հասնում էր մեծ ըրածնուեցաւ անկէ եւ քահանայութեան սուրբ կտրգր րնդուեցաւ, եւ օրէ օր աւելի եւս անձնատուր ըլլալով հոգեւոր հրահանգներու աշխարհի մէջ կ'ապրէր իրեն ճգնաւոր: Վայժառն հոգի Սահակայ սքանչելի վարքէն շարժած անոր աշակերտացան, անոր պէս հրաժարեցան աշխարհէ, եւ խաղաղագգեստ բոկոտն կ'երթային անոր հետ ամէն տեղ:

Ս Սահակ իր կեանք մեռնելէն յետոյ իր Սահականոյն աղջիկը կնութեան տուաւ պատուով եւ բարեպաշտութեամբ երեւելի Հաղապետ Մամիկոնեանին: Այս երջանիկ ամուսնութենէ ծնան Սուրբ Վարդան, Հմայեակ եւ Համալուսեան սքանչելի նահատակներ. եւ այսպէս Լուսաւորչեան տոհմը մայրական գծով միայն շարունակուեցաւ:

Այս միջոցին Սուրբ Ներսէս Հայրապետը Պապ թագաւորէն թուաւ որոշելով վախճանած էր, եւ Հայաստան կը գտնուէր մեծ խռովութեան մը մէջ, որուն գարման չկրցան ասնիլ օչ ժամանակին թագաւորները, Վարդապետ, Արշակ եւ Վարդաշակ, ոչ ալ կաթողիկոսները, Շահակ, Զուէն եւ Ապուրաւակս ոչ ընդ կտրճ կեանք մը ունեցան:

Երբ Խոսրով երկրորդ Հայոց թագաւոր եղաւ, նախարարները միացուց և Յունաց Արկադէոս Կայսեր հետ հաշտութիւն կնքեց. և ապա իր թագաւորութեան երրորդ տարին (388) երբ Ասպուրակէս Կաթողիկոսը մեռաւ, ամէնուն հաւանութեամբ Հայրապետական Աթոռը բազմեցուց Ս. Սահակը որ այն տան յիսուն կամ վաթսուն տարւան էր: Ասով Հայաստանի մէջ յանկարծ մեծ փոփոխութիւն մը տեղի ունեցաւ և ամէն կողմ տնդորութիւնը սկսաւ տիրել: Որովհետեւ, Ս. Սահակ անմիջապէս անձամբ և իր սրբակրօն աշակերաներով ձեռք զտրկաւ երկրին քարեկարգութեան:

(Շարունակելի)

ՍՈՒՐԲ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՄԻ (*)

Ձեւ նուիրման

(Հրամայեալ ի Ղեւոն ԺԳ. Ս. Քահանայապետ Եւթեայի վերջին օրուան համար. — 11 Յունիս 1899)

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, Փրկիչ մարդկային ազգի, նայուածքներդ դարձո՛ւր մեր վրայ՝ որ խոնարհաբար երկրպագած ենք քու խորանիդ առջև: Մենք քուկդ ենք, քո՛ւկդ կ'ուզենք ըլլալ. և քեզի աւելի սերտիւ միանալու համար, այսօր մեզմէ իւրաքանչիւրը ինքը զինքը յօժարակամ կը նուիրէ քու Սուրբ Սրտիդ: Շատ մարդիկ կան որոնք զքեզ բնաւ չեն ճանչցած. շատեր ալ կան, որոնք քու պատուիրաններդ արհամարհելով, զքեզ մերժած են: Ասոնց ամէնուն ալ զթա՛, ո՛վ ամենողորմ Յիսուս, և զանոնք ամէնքը հրաւիրէ՛, քաշէ՛ քու Սրտիդ: Ո՛վ Տէր, Թագաւորը եղի՛ր՝ ոչ միայն հաւատացելոց որոնք բնաւ չեն բաժնուած քեզմ, հապա նաև այն անառակ որդիներուն, որոնք զքեզ լքած են. իրէ՛ որ ասոնք շուտով վերադառնան հօրենական տունը, զի մի՛ գուցէ թշուառութեամբ ու անօթութեամբ կորսուին: Թագաւորը եղի՛ր նաև անոնց զորոնք մոլորութիւնը հրապուրած ու պատրած է կամ հակառակութիւնը բաժնած է. առաջնորդէ՛ անոնց դէպ ի ճշմարտութեան նաւահանգիստը ու հաւատոյ միութիւնը, որպէս զի փութով ըլլայ «Մի հօս եւ մի հովիւ»: Թագաւորը եղի՛ր վերջապէս, անոնց ամէնուն, որոնք թաղուած են հեթանոսու-

թեան պաշտամանը մէջ. հաճէ՛ կոչել զանոնք խաւարէն ի լոյս, և յԱրքայութիւն Աստուծոյ:

Շնորհէ՛, Տէր, քու Եկեղեցւոյդ փրկութիւն, հանդարտութիւն ու ազատութիւն. շնորհէ՛ ամէն ժողովրդոց կարգ կանոն ու խաղաղութիւն. ըրէ՛ որ երկրիս մէկ ծայրէն միւսը հնչէ միեւնոյն աղաղակը թէ՛ Գովութիւն Աստուածային Սրտին, որ տուաւ մեզ փրկութիւն. Անո՛ր փառք ու պատիւ յաւիտեանս յաւիտենից, Ամէն:

ԱՍՏՂԵՐՈՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ե Ի

ԱՍՏՂԱԳՈՒՇԱՆՈՒԹԻՒՆԸ

Մարդս բնածին բերում մը ունի իր շուրջը տեղի ունեցող իրողութեանց պատճառները փնտռելու: Նախկին ժողովուրդները կեանքի երեւոյթները մեկնելու համար համաստեղութեանց կը դիմէին և անոնց նկատողութենէն ալլեալ աւելորդապաշտական հետեւանքներ կը հանէին: Ահա ասկէ յառաջ եկաւ աստղագուշակութիւնը, որ մեծ յարգ ունէր Յունաց, Եգիպտացւոց և մանաւանդ Քաղդէացւոց քով, որոնք նոյնին հնարիչները կը համարուին:

Աստղագուշակութիւնը որ թաքուն գիտութիւն մըն է և միանգամայն մայր է արդի աստղաբաշխութեան, արդեօք աւելի վրտահիւսի սկզբունքներ ընդունե՞ր է մեր այժմու գիտութիւններէն: Արդեօք աստղերը մեծ ազդեցութիւն մը կը գործեն երկրիս եղելութիւններուն, յատկապէս մարդկային ճակատագրին վրայ: Կաթողիկէ մը կրնա՞յ հետեւիլ այսօրինակ դրութեան մը՝ առանց ուրանալու իր հաւատքը: Մարդս օր մը, շնորհիւ գիտական յատաշղիմութեան, պիտի կարենա՞յ արդեօք գուշակել ապագան, գտնէ այն ապագան որ կախում ունի անհատներու ազատ կամքին գործառնութիւններէն:

Այս հարցումներուն առանց տարակոյսի հնար է պատասխանել իմաստասիրական և պարզապէս հոգեբանական տեսակէտով: Եթէ աստղերը մեր վրայ որոշ ազդեցութիւն մը

(*) Տես թիւ 430, էջ 42:

ունենային մեր կամքը կը բռնադատուէր և մեր անձնիշխանութիւնը անհեա կ'ըլլար։ Այս որոշականութիւնը գլխավին հակառակ բլլալով մարդուս սպասութեան վարդապետութեան՝ հարկ է որ ամէն կաթողիկէի կողմէ զատապարտուի։

Գիտուն մը կրնայ այո՛ նախագուշակել անգործարանաւոր աշխարհի գէտքերը, տուղերու գիրքը երկինքի մէջ, գիտաւորներու դարձը, և այս կարգի բաներ. որովհետեւ ասոնք յառաջ կու գան հաւելէ մը, այսինքն Աստուծոյ սահմանած օրէնքէն։ Բայց գիտուններու ամենամեծն իսկ չի կրնար գուշակել թէ ես ժամ մը յետոյ ի՞նչ պիտի ընեմ. զուք վաղը կամ երկու տարի վերջը ի՞նչ պիտի ուզէք. երկու դար ետքը ազգ մը, ժողովուրդ մը, ընկերութիւն մը ի՞նչ պիտի ըլլայ։ Աստուած միայն, իր նախագիտութեան շնորհիւ տեղեակ է ապագային։

Անշուշտ երկրիս բնական երեւոյթներէն շատերը արեւէն և յուսիսէն կախուած ունին. արեւը կլիմայի փոփոխութեանց վրայ ըրած ներգործութեամբ կ'ազդէ, իրօք մեր մարմնոյն և մեր զգայարաններուն վրայ եւս. բայց կարելի՞ է որ ցուրտի կամ տաքի եղանակս որում մը ազդէ մեր որոշումներուն և մեր անձնիշխանութեան վրայ։ Միթէ աւելի կամ նուազ ազատ կ'ըլլայ մարդս երբ Լարոնիա, Շրիգպէրկ կամ Սուտան գտնուի. եւ չի՞ կրնար ամէն երկրի մէջ հասարակաց հետեւիլ բարոյական օրէնքին։

Լուսինը իր ձգողական զօրութեամբ կը նա՛յ միթէ մեր ազատութիւնը կապուել եւ բարի մարդը չարագործ ընել։

Գանք մոլորակներուն։ Գործնականապէս Արամազդ, Նեւտոն եւ Ուրանսս մեր վրայ ու եւ է ազդեցութիւն չունին։ Դեռ կարելի չէ եղած ապացուցանել, օրինակի համար, Նեւտոնի երկրիս ամբողջ զանգուածին վրայ ըրած ամենափոքր ներգործութեան քանակը, ո՛ւր կը մնայ այլեւս անոր ենթադրական ազդեցութիւնը մարդոց վրայ, որոնք այնչափ են երկրիս նկատմամբ, ինչ չափ է մանրէ մը նարնջի նկատմամբ։

Կը մնան աստղերը։ Ասոնք աստղիւս ա-

րեւու չափ խոշոր են, բայց մեզմէ անսահման կերպով հեռու են։ Արեւը մեզմէ 149 միլիոն 400 հազար քիլոմէթր հեռու է. իսկ ցարդ մեզի ամենամօտ համարուած աստղը անուագն 280,000 անգամ 149,400,000 հեռաւորութիւն ունի։

Արդ՝ աստղի մը երկրիս վրայ ըրած գործնական ազդեցութիւնն ալ կրնայ ոչինչ նրկատուիլ. Եթէ տեսականօրէն, արեւուն մօտակայ աստղեր, անոր վրայ իրենց ձգողական զօրութեամբ կը ներգործեն, այդ ներգործութիւնը երկրիս վրայ չ'ազդեր. գալով աւելի հեռաւոր աստղերուն, անոնք երկրիս համար չկայի պէս են. եւ, ասկէ զատ, ձգողութեան մէկ եզանակաւորումը մեր ազատութիւնը չի կրնար այլայլել։

Ո՛չ, երկնականարին զարդերը չար ազդակներ չեն, ինչպէս կ'ուզէ ցոյց տալ մարդկային ազատութիւնը ուրացող ամբարիշտը։ Այդ չար ազդակները մեզի աւելի մօտ են, ասոնք են մոլար վարդապետութիւնները, փեսայաւոր թերթերը, անբարոյական գիրքերը, մեր կիրքերը, մեր վատթար ունեւկութիւնները։

Չամբաստաններ, ո՛չ արեւ, ո՛չ յուսիսը, ո՛չ աստղերը. մենք ենք մեր ճակատագրին վարիչները. այս խնդրին ինչպէս ամէն ճշմարիտ սկզբունքներու մէջ, գիտութիւնը հաւատքի չի հակառակէր. բայց հոս կաթողիկէ վարդապետութիւնը կ'անցնի գիտութեան սահմանը, եւ մեզի կ'ուսուցանէ թէ երկրիս վրայ մարդուս հոգին ինքն իր ուժով չի կրնար յաղթել ամէն արգելքներու։ Մարդս իր սկզբնական անկումէն ի վեր ոչինչ կ'արժէ առանց Աստուծոյ օգնութեան, առանց շնորհքի, առանց աղօթքի։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԽԱՓՇԻԿՆԵՐՈՒ ԽՄԱՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ.— Ծանօթ է սեւամարմնեւոր ունեցած Իսհեմութիւնը. ուստի գոյս ամէն դէպքի մէջ ալ կը յանձնարարեն։ Բայց կարող անձէ պէտք է եւրհուղ հարցնել, եւ ոչ ուրիշէ մը։

«Ձուկին խորհուրդ չի հարցուի դաւաճիմ խնդրեալ մասին, ոչ ալ դաւաճի մուկին՝ ինչ որ գեներալ կը վերաբերի։»

«Շունը բնաւ չի հաշտեր արջին անձաւին մէջ» ալ-սինքն ձենէ դօրաւորին դէմ մի կանգնիք:

«Անխորհուրդը իր չզիցցած բաները վիայն զաղցնի կը պահէ:

«Կողպանք իր ներսի կազմածին ինչպիսի բլլալէն տեղեակ չ'ըլլար:

«Փաղցնիք մը հաղորդուած պահուն, պէտք է դի-տել քէ մայառները չեն լսեր: Փոռ խորհրդակիցը պիտի ըլլայ զաւ անգամ քեզ մասնադր:»

Բայց սեւամորթք ծայր աստիճան խոհմ մը-լալով հանդերձ, զօրաւոր ու քաջասիրտ ալ են:

«Ունեւիները կ'իշխեն երկաթագործին բով. աշխա-տութեամբ միայն դրամը կու գայ:

«Արեւայտը օրուան մէջ երկու անգամ չ'արթնցնէր միեւնոյն մարդը:

«Պատերազմը բռնկած պահուն միայն ի յայտ կու-գայ քաջութիւնը: Աւազակայի (ծառ մը) սիրտը չի տեսնար տապալիս դէմ. անվերք կը տանի հառուած-ներուն:

«Յէթ զօրաւորը քեզ խոտանգէ՛ խնդա՛ անոր քթին:» Որքան քաջասիրտ, տոկոսն, պաղարիւն է Ափ-րիկեցին, նոյնքան ալ խոր զգացումն ունի թշուա-ռութեան ու սկարտութեան:

«Ամպերը կը նստեցնեն երկնակամարը. միզա-պատ օդը կ'արգելու արեւին ճառագայթները: Այսպէս է նաեւ դժբախտութիւնը. սոն կը հեռացնէ բարեկամնե-րը: Աղբաք չունի ազգական, թուառ է ան, չի կր-նար իմաստուն ըլլալ:»

Մ. Տը Հարլէզը նշանակութեան արժանի ու քիչ ծանօթ դէպք մը յառաջ կը բերէ: Ինչ ինչ ցեղե-րու սեւամորթք խնայողական ընկերակցութիւններ ալ ունին՝ որոնք պարբերաբար ի ժողով կը գու-մարդուին: Իւրաքանչիւր անդամ՝ որոշ գումար մը կու տայ՝ սահմանուած օրերու մէջ, ու կ'օգտուի ընդհանուրին շահէն:

Խափշկները բառախաղերէն ու մտքի խաղե-րէն ալ շատ կ'ախորժին: Հայր Պուշ կը պատմէ թէ անոնք ստէպ շրջանակ մը ձեւացնելով հանելուկ-ներով իրարու հետ կը մրցին: Ահա մէկ քանի նմոյշ իրենց նախընտրած հանելուկներէն.

«Ո՞րն է այն հիւրը՝ որ եւ ոչ մէկին դէմքը չի նայնար... — Կրակը:

«Ո՞րն է այն մարտիկը որ լիք է քէ քաղաքի քէ գիւ-ղը... — Սահմանափակ ու գրաքան մարդը:

«Ո՞րն է այն վաճառականը՝ որ բնաւ չի հասնիր մինչեւ վաճառանոց... — Կուրք (նաւակ):»

Վերը խօսեցանք սեւամորթերու բարոյական առակներու մասին: Հոս անոնցմէ հատ մը համա-ռօտենք գաղափար մը տալու համար: Մարդ մը չքաւորութեան մէջ իյնալով, ա՛լ ուտելիք բան մը չունէր: Կիանքը տաղտկալի եկաւ իրեն, ուստի ու-զեց վերջ տալ անոր: Չուան մը առաւ, ծառի մը մօտեցաւ ու կը պատրաստուէր կախուելու: Մէկէն նշմարեց իրմէ քանի մը քայլ անդին լուսացող բո-

րոտ մը, եւ անոր պոռաց որ անյապաղ հեռանար այն տեղէն: Բարոտը հանգարտօրէն աւարտելով իր լողանքը, կ'առնուէր իր ղեկավար ու կը հեռանայ ը-տելով. «Հիմակ կ'երթամ ես իմ տունս կեանքը վայե-լելու համար»: Մեր մարդուկը կը զգածուի այս խօս-քէն եւ ինքնիրեն կ'ըսէ. «Ի՞նչպէս, այս հէքը որ այլեւս ո՛չ սուք ունի, ո՛չ ձեռք, մարմինը ամբողջ պատառ պատառ եղած է բորստութենէն, ու դեռ կեանքի վայելքի վրայ կը խօսի»: Այս թշուառը, ա-մենէն անարգութեամբ, կարօտ ծայրաստիճան, ու դարձեալ հմայք կը գտնէ կեանքին մէջ, մինչ ես որ լաւ սուքեր ունիմ, լաւ ձեռքեր, ինքզինքս պիտի կախեմ...»: Եւ իսկոյն սթափած, խափշիկը իր չուա-նը առնելով տուն կը վերադառնայ, կազմ պատ-րաստ դիմագրաւելու ամէն դժուարութեանց:

Անվերքն է որ աղու փիլիսոփայութիւն կայ այս պղտիկ պատմութեան մէջ: Եւ մեր մէջբերում-ներն ալ կ'ապացուցանեն բաւականէն աւելի թէ, խափշիկները ստորին մարդկութիւն մը չեն կազ-մեր, ինչպէս կը պնդէին երբեմն: Անոնց գրական սաղմը, կարծենք, բաւական է քաջալերելու այն շնախոյզներն ու քարոզիչները, որոնք կը փափա-քին քաղաքակրթութեան բարիքը ընձեռելու ա-նոնց, ու մանաւանդ ինչ որ աւելի թանկագին է, քրիստոնէութեան բարիքը:

Մ'տնկիւնի (Vénérable) Տօն Պոսգօ (1815—1888) որ այնքան հոգակ հանած է ո՛չ միայն վարուց սրբութեամբ, այլ նաեւ անթիւ անհամար որք եւ ստահակ տղայոց կրթութեամբ եւ այս վախճանաւ Սալէզեան կրօնաւարաց կարգը հաստատելով, որոնք բերաւ որ մանուկներ կը դաստիարակեն բովանդակ աշխարհի մէջ, իր տղայութեան ժամանակէն մեծ փափաքով կ'եռար փողոցի տղաքը ժողովելով անոնց խրատները, քարոզները խօսելու, եւ ինքը մեծ բաղ-ձանք ունէր քահանայ ըլլալու: Հաղիւ տասը տա-րեկան եղած ատեն, երբ իր հօրմէն որք էր ան-գաղար կը փափաքէր քահանաներ տեսնելու ու անոնց հետ խօսելու: Կը սիրէր մանաւանդ իր թե-մին ժողովրդագետը: Կը տեսնէր զանի եկեղեցին, մտիկ կ'ընէր անոր քարոզները. բայց կ'ուզէր աւե-լի մօտենալ անոր, իր մտածութիւններն անոր հա-ղորդել, հարցնել անոր թէ ինքն ալ օր մը քահա-նայ ըլլալ կարենալու համար ի՞նչ պէտք էր ընել: Երբեմն անոր անցնելիք ճամբուն լայ կ'երթար սպասելու, երբ նա երեկոյեան դէմ պտույտի կ'ել-լէր: Կը բաղձար անոր հետ մտերմական տեսու-թիւն մը ունենալ: Անոր գալը տեսած չտեսած, հեռուէն կ'ողջունէր, եւ աւելի մօտենալով, կը կրկնէր իր ողջոյնը: Կը սպասէր որ ժողովրդագետը նշմարելով զինքը, հայրագործ խօսք մը ըսէր ի-րեն, բայց այս բարի քահանան անոր բարեւն առ-նելով՝ իր ճամբան կը շարունակէր: Սանուկն այն

ատեն լալով տուն կուգար, եւ իր արցունքներուն պատճառը կը հասկցնէր իր մօրը:

— «Ի՞նչ պիտի ընես, կը պատասխանէր մայրը. մեր ժողովրդավետը սրբակեաց քահանայ մըն է բայց ան շատ գիտուն է, ու չի կրնար քեզի պէս տղեկի մը հետ խօսակցելու կենալ:

— Բայց, կ'ըսէր մանկիկը, մեծ կորուստ կ'ըլլար իրեն միթէ՞ ինծի բաւ մը ըսել ու քանի մը վայրկեան իմ քովս կենալ:

— Ի՞նչ կ'ուզես որ ըսէ քեզի:

— Քանի մը բաւ՝ զիս աւելի խելօք ընելու, քանի որ այնչափ գիտուն է, ո'րչափ գեղեցիկ բաներ գիտէ արդեօք ինծի պատմելու համար:

— Տղա՛ս, կը տեսնես թէ շատ գործ ունի. քարոզ, խոստովանանք, հոգ հոգւոց:

— Բայց մենք, պղտիկ տղաքս իրեն գաւակնեւորը չե՞նք միթէ:

— Հարկաւ. բայց նա տղաքը իրենց մայրերուն կը յանձնարարէ, որովհետեւ կորսնցնելու ժամանակ չունի:

— Ուրեմն Յիսուս իր ժամանակը կը կորսնցնէ՞ր երբ տղայոց հետ կը խօսէր:

— Տղա՛ս, ես ալ քու կարծիքէդ եմ, բայց ի՞նչ ընենք:

— Ես, կ'ըսէր տղան, եթէ օր մը քահանայ կանոնաւոր ըլլալ, ամբողջ կեանքս տղայոց պիտի նուիրեմ. զիս բնաւ աղբալէս չպիտի տեսնես, ես առաջինը պիտի ըլլամ անոնց խօսելու: Զատնք քովիկս պիտի կանչեմ, զանոնք պիտի սիրեմ, անոնք ալ զիս պիտի սիրեն անշուշտ: Անոնց բարի խրատներ պիտի տամ ու անոնց պիտի սորվեցնեմ երկնքի ճամբան:

ԳԱԹՕԼԻԿ ՄԵԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ (*)

— Յագագի ինսանըն բուհը նէ՞ տիր:

— Ինսանըն բուհը, պիր ճիսմ իլէ պիր-լէշմէք իւղրէ ծէնապը Հագգըն սըֆաթըն-տա խալդ օլընմըշ, էօլլումսիւզ, սէրպէսի վէ բուհանի պիր ճէվհէր (substence) տիր:

1. Բուհը ինսան պիր նեվնէր սիր: Ճէվհէր վէ եա վարլըգ տէմէք, վար օլմադ իւչուն պիր պաշգասը իւզէրինտէ եախօս պիր պաշգասընտա պուլընմայա ինթիյաճը օլմագ-սըզըն վար օլան, գայլիմ օլան շէյ տէմէք տիր, մէվճուտիյէթ տէմէք տիր:

2. Բուհը պէեհր սաֆի վէ բուհանի սիր: Բուհ տէմէք սաֆի, ղայրը մատտի, գաթի (substantiel), տիրի օլան վէ վար օլապիլ-

մէք, թանրմագ, իսթէմէք վէ իշլէմէք խուսուսընտա մատտէյէ միւշթաճ օլմայան պիր մէվճուտ տըր: Բուհըն ղայրը մասսի օլմասը տէմէք, ճէսամէթի պուլընմամասը, ղայրը գապիլի թագսիմ օլմասը, մատտէյէ մախսուս օլան խալասը մահսուսէտէն մուարրա պուլընմասը վէ հասսէլէր վասըթա-նըլա կէօրիւլէմէյիպ հիսս օլունամամասը տէմէք տիր:

Պիր բուհը անճագ շու իքի շարիթ թէշ-քիլ իտէպիլլի, հանի

ա. Բուհ օլան պիր վարլըգ սաֆի օլմասը, ղայրը մատտի օլմասը, ղայրը գապիլի թագսիմ պուլընմասը:

բ. Մէվճուտիյէթինտէ վէ պաօլընա էֆալընտա մատտէտէն միւսթագիլլ պուլընմասը:

Յ. Բուհը պէեհր սէրպէս սիր, հանի բուհ պիլզագիթ քէնտի ինթիլասպըլա քէնտի եաբաճաղըն թային իթմէք, պիր շէյի պիր տիկէրինէ թէրծի հյլէմէք, խայր վէ եա շէր-րին իճրասընտա պուլընմագ մէլէքէսիին հայիլ տիր: Պու մէլէքէյէ իրասէթի նիւզիյէ թապլի օլընըր:

Գ. Բուհ էօլլումսիւզ սիր, հանի. բուհըն էօլլումսիւզ օլմասը օսըն թապիլաթընըն հիւք-միւնտէն տիր, օ տայլիմա տուլմալը, ճիսմին ֆէնա պուլմասընտան սօնրա տա եաշամալը վէ հիշ ապա եաշամագտան ոուր օլմամալը տըր:

Ծ. Բուհը պէեհր Ալլահին սընաթընսա խալդ օլընմըց սըր, չիւնքի բուհը պէշէր տէ ծէնապը Հագգ գիպի թանըմայա, սէվմէյէ վէ հարաքէթինտէ սէրպէսի օլմայա միւզ-թէտիր տիր: — Ալլահ բուհ տըր, պիլլիմ ճանըմըլ տա բուհ տըր: — Ալլահ սահիպի իտրագ տըր, պիլլիմ բուհըմըլ տա սահիպի իտրագ տըր: — Ալլահ էպէտի տիր, բուհը ինսան տա էպէտի տիր: — Ալլահ ղայրը մահսուտ տըր, հէր եէրտէ մէվճուտ տըր վէ տիւնեանըն հէր գըսմընտա պիլթիւն վար-լըղըլա մէվճուտ տըր, պիլլիմ բուհըմըլ տա հուտուտա թահաթա իսիլէմէզ վէ իհեա իթսիյի շու ճիսմըլլիյին հէյէթը մէճուտաընտա օլաուղը կիպի, հէր գըսմընտա տաթի

(*) Տես Թիւ 134, էջ 140

պիւթիւն վարըղըյա մէվճուտ տըր: Պի-
նաէն ալէյ, րուհը պէշէր ձէնապը Հագդըն
պիր սըֆաթը տըր:

6. Ինսանըն րուհը ճիսմ իլէ պիւրիեմեֆ
իւզրէ խալլ իսիլիւ սիր, չիւնքիւրուհ ճիւսմ
իլէ պիրլէշմէլի տիր քի պիր թէք պիր պեհի
պիւլընան եալընըզ պիր թէք պիր ինսանի
թապիաթ, պիր զաթ թէշքիլ իտէպիլսին:
Ինսանըն ճիսմընէ վարըղ, հարաքէթ վէ
հայաթը վէրէն րուհ տըր: քի, պու սուրէթ-
լէ ճիսմըն ինէա իտէրէք ինսանի թապիաթը
իքմալ իտէր վէ պու իքիսինին իճթիսմը
նէթիճէսի օլարազ ինսամ հասըլ օլուր:

Րուհըն իւշ տէ խասասը վար տըր: սա-
ֆիլիք, սէրպէսթիլք վէ էօլմէլլիք: Ինսա-
նըն րուհընը թէշքիլ իտէն իշթէ պու իւշ
պէօլիւք թէմէյիւլաթ տըր քի պու սայէտէ
ինսան աուհ թապազաթ մէվճուտաթընուան
ճիսսէն վէ հասսէն թէֆրիզ օլընըր վէ մէ-
լէքլէրէ վէ ձէնապը Ալլահա միւշապիհ պու-
լուընը:

Ալլահըն մէվճուտիլէթի, էֆալըյա սա-
պիթ օլուտը կիպի, րուհըն տա սաֆիլիլի
քէնտի սասըրյա սապիթ օլուր: Պիր մէվ-
ճուտըն էֆալընըն օնուհ թապիաթընա մու-
թապըզ վէ մուվաֆըզ օլմասը պիր բրէնսիք
տիր, իեհի իեիլի բանըլըր տէնիլտիլի կիպի:
Իմտի մատամ քի պիլիմ րուհընըզ տա ֆի-
ֆիլիք, մուհաֆիլէր վէ իսթիլէր կիպի է-
ֆալ ու սասըր սաֆիլէյէ վիւճուտ վէրի-
յօր: շու հալտէ պիլիմ րուհընըզ տա սաֆի
տիր, րուհանի տիր:

(Մապաւի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Ս. Քահա-
նայապետ Փետր. Վին հանդիսաւոր ունկնդրութիւն
շնորհեց Սպանիոյ նոր դեպան կոմս Վինասայի:

Ընդունելութիւնը տեղի ունեցաւ քահանայ ս-
պետական պալատին զահարահին մէջ: Ինչպանը՝ Ն.
Արքուժեան աջը համբարելէ յետոյ կարճ ուղերձով
մը մատոյց իր յոյժ կաթողիկէ Վեհափառութեան
ներկայացուցիլ հանգամանքը հաւաստող վաւերա-
թղթերէ: Ինչպանը յայտնեց իր շնորհապարտ գգա-
ցումները տյաքան բարձր պաշտօնի մը կոչուած ըլլա-
լուն համար. և աւելցուց որ Ս. Քահանայապետին

լուսականութեան շնորհիւ կը յուսայ թէ երկու ար-
քուհիքներն ալ պիտի կարենայ հաւասարապէս գո-
հացել:

Ն. Արքուժիւնը հարագութիւն խօսքերով պատաս-
խանեց դեպանին, և վստահացուց զինքը Ս. Աթո-
սին բարեօրոշակամ արամադրութեանց վրայ:

Ապա Ս. Հայրը՝ իր յարկարաժինը հրաւիրեց
զգեսպանը առանձին խօսակցութեան: Որմէ ետքը
դեպանը Ս. Հօր ներկայացուց իր հետեւորդները:

Ունկնդրութեան վերջը դեպանը տեղաւ մեծ
յարկարաժիններէն և արահներէն ուր գինուորական
պատիւներ բողոքեցու քահանայապետական պա-
հակագումըրու կողմէ: Ապա ընկերակցութեամբ ա-
րարողապետութեան քարտուղարին և գուրցերական
պահակագումըրին Ն. Վսեմ. Տէրութիւնը այցելեց
Վսեմ. Պետական Քարտուղար Կարդինալին: Յետոյ
իւր հետեւորդներով գնաց Վատիկանի Մայր-եկեղե-
ցին և աղօթեց Առաքելոց Իշխանին շիրմին վրայ:

Ն. Վ. Մէրի Տէլ Վալ Կարդինալը ընկերակցու-
թեամբ Գանալի Գերապայծառին, կէսօրէն յետոյ
այցելութիւն տուաւ Սպանիոյ նոր դեպանին:

*. Ապանիոյ Վեհապետ Վիտ Իշխանը Վիեն-
նայէն տնցելու տան, այցելեց նոր տեղւոյն Առա-
քելական Նուիրակ Սքոթրիլի Գերապայծառին և
մտերմօրէն խօսեցաւ Բապտիստ Կաթողիկէներուն վրայ:

*. Պաւլէրայի Լուգովիկոս Գ. Թագաւորը՝ Ն.
Վ. Մէրի Տէլ Վալ Կարդինալին տուաւ Ս. Ուպեր-
թոի պատուանշանը, զոր յանուն իր Վեհապետին
յամէնեց Ն. Վ. Պետական Քարտուղարին Պ. Ոթոն:
Ս. Գահին մօտ Պաւլէրայի դեպանը:

*. Հռոմի Կաթողիկէ Գործակցութեան Թեմա-
կան Վարչութիւնը մասնաւոր ունկնդրութեան ըն-
դունեցաւ Ս. Հօր կողմէ, Գահարահին մէջ:

Վարչութեան Գահերէց Փիօ Յոքի պարզեց Ն.
Արքուժեան առջեւ նոյն վարչութեան տնդամներուն
զգացումները և իղձերը և խնդրեց անոր առաքելա-
շնորհ օրհնութիւնը:

Ս. Հայրը գովեց անոնց քրիստոնէական եռանդը
և յորդորեց որ շարունակեն աշխատիլ Հռոմի կրօնա-
կան և բարոյական յառաջգիւնութեան համար: Ապա
օրհնեց զամէնքը: Յետոյ տեղի ունեցաւ աջահամբոյ-
րի արարողութիւնը:

ԷԶՄԻԱՆՆԱԿԱՆ ՀԱՅԵՐ.— Մէզուտական ընտ-
րութեանց պատճառաւ երկու ամիս ի վեր Հայոց
ու կառավարութեան միջեւ տիրող անհամաձայնու-
թիւնը այս օրերս կերպով մը լուծուեցաւ, վերջա-
պէս, Ստեփանն աղգին յաւ խորհրդներն և թերթերու
մեծագոյն մասն ալ համբերութիւններն ուղեւս հատ-
նելով, սկսան շարաշար հարուածել Կաթողիկէները,
որ չաւաղականապէս աղգին մէջէն կ'օտար վտարելու,
կը չանայ նաեւ, իր նիւթական շահուն համար միայն,
աղգին գլուխը աղէտներ բերելու: Այս իմաստով

զարհուրելի յօգուածներ սկսան գրել Բանբեր, Ճէրի-
րէի Շարգիյէ, Ժամանակ, Բիւզանդիան, եւն. ազգա-
դաւաւ և ազգակործան կոչելով 'Իսլամականութիւնը և
անոր օւկան Ազատամարտ թերթը, զոր կ'անուանեն
Շահամարտ, այսինքն իր շահուն համար կռուող: Եւ
յիբրաւի այս մէկուսական ընտրութեանց մէջ այս
կուսակցութեան տիրապետական անիրաւ ընթացքը
քիչ մնաց աղէտ մը պիտի բերէր ազգին գլխուն, եթէ
դեռ չընէրէ...

Միայն թէ այդ թերթերն քիչ մը ուշ արթնցան.
մենք երկու ամիս առաջ նախագուշակած էինք զայս:
Մեր Յուշուար 3ր թիւով կը գրէինք (էջ 3). «Շատ
րաներ պիտի ունենայինք, և շա'տ օգտակարապէս ը-
սելու մեր Հւյ եղբարց գործած ձախաւեր մեծամեծ
սխալներուն նկատմամբ... խնդրոյն մէջ կային Առաջ-
նորդ կոյրբ... անհեռատես, մտախաբ, դատաստա-
նազուրկ, կարճամիտ... Աստուք՝ անխելք պնդումնե-
րով՝ առանց օգտի, առանց պատշաճութեան, առանց
կատարեալ օրինականութեան, ազգայնութիւն մը
չողացուցին, որ ազգատեաց շանթ մը կրնար դառ-
նալ, Տէր մի՛ արասցէ... բայց մենք մեզի չենք նե-
րեր քաղաքականութեամբ զբաղիլ: Եւ դիտել տուած
էինք նաև թէ վարչական ըսուած ժողովին ալ յայտմ'
մասին էջմիածնականաց միանալը՝ — յանրաւր՝ յառ-
նուն կաթողիկէ Հասարակութեան — ամենամեծ և
անհեռատես սխալ մըն էր: Աս դիտողութեան դէմ՝
տրտնջացին. ո՛րչափ անիրաւ էին... որովհետև յետոյ
իրենք ստիպուեցան բաժնուիլ... մեր Հասարակութիւ-
նը, բայց մանաւանդ զիրենք վտանգելէն (compro-
mettre) վերջը: Լաւագոյն էր կանխատես ըլլալ...»

❖ Պոստ իջմ'. Հայոց կեդրոնական վարժարանը
փակուեցաւ, դասագրքի պատճառաւ: Թէեւ Տես-
չութիւնը Բարեկենդանի արձակուրդ կը համարէ ա-
սիկա, բայց ստուգուած է որ դասագրքը ընող երկու
կարգի բոլոր աշակերտներուն բացակայութենէն ա-

ռաջ եկած է վարժարանը փակուել կարգադրու-
թիւնը:

Ներքին եւ Միջազգային Գործեր. — Ներ-
քին գործոց ստիարարութեան կազմած քաղաքային
քննիչներու մտքմէնը գործի ձեռնարկեց: Նախնական
երթալիք քննիչները շուտով ճամբայ պիտի ելլեն:
Նախապէս զրկուած քննիչներուն առաջին տեղեկա-
գիրները հոս ժամանեցին: Քննիչներու գիւտնը հոս
մաստեղով վանսք նախարարութեան ներկայացուց:
Տեղեկագիրները միեւնոյն աստիճանէն անգլիներէն կը
թարգմանուին, որպէս զի քննիչներու մարմնին անգ-
լիացի տնօրէնն երբ հոս ժամանէ, ուսումնասիրէ զա-
նոնք:

❖ Հռոմի դիւանագիտական շրջանակներ կը
հերքեն թէ 12 կղզիներուն մասին պաշտօնական բա-
նակցութիւն կը կատարուի Թուրքիոյ և Իտալիոյ մի-
ջեւ: Անկոյցը կը ճշդէ թէ Իտալիոյ դրաւած կղզի-
ները պիտի պարպուին այն աստիճան միայն երբ Թուր-
քիա դարձադրէ Լօզանի դաշնագրին բոլոր տրամա-
գրութիւնները, երբ մասնաւորապէս Տրիպլիյա մնա-
ցած օսմ'. զօրականներն ետ կանչէ և երբ վճարուին
բոլոր ծախքերը, զորս Իտալիա ըրաւ Լօզանի դաշ-
նագրին տրամագրութիւններուն չգործադրուելուն
հետեւանքով 12 կղզիներուն դրաւումն երկարաձգե-
լուն համար:

❖ Աթէնքէն Պոստ յայն թերթերուն եկած հե-
ռագիրներ կը ծանուցանեն թէ Ալպանիոյ յատկա-
ցած կալրոսեան վայրերուն մէջ, զորս Հելլէն կառա-
վարութիւնը խոստացած էր պարպել, յայն ժողո-
վաւրն անկախութիւն հռչակեց և սմէն կողմը դրօշ
պարզեց: Հելլէն իշխանութիւնք, Աթէնքի կառավա-
րութենէն իրենց ստացած հրամանին վրայ մեկնելու
պատրաստուեցան և ժողովուրդն այդ բոլոր վայրե-
րուն մէջ առժամայ կառավարութիւններ կը կազմէ:


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	129
Երուսաղէմ	131
Տեառն Կոմիտասայ Քաճաճային պատմութիւն Օսմանցոց	133
Ս. Հաղարդութեան վարդապետութիւնը	135
Եօթնակ Գրիգորներ	138
Սուրբ Սիրս Յիսուսի	139
Աստուծոյ ազդեցութիւնները եւ աստուծոյ անկողնի	139
Այլեւայլ	140
Գաթալիք Մեղիկայի Էսապար	142
Տեղեկագրական	143

ԱՐՏՈՆԱՏԵՐ
ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՕՐԵՆ-ԴՄ ԲԱԳՐԱՊԵՏ
ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԵԱՆՆ

Տպարան Կ. Արմազաճի Զաքարիայի, Բերա, Պայրամ փողոց բիւ 5, Կ. Պոլիս



ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒԱԿԱՆ


ՊՕՂՈՍԻ ՊԵՏՐՈՍԻ ԺԳ. ԹԵՐԶԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐԺԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Տղայոց ուղղափառ կրթութեան վրայ



Կ. ՊՈԼԻՍ
Տպարան «Կ ԱՐԶԱԳԱՆԴ» Ի
1914



ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ

ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.

ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՅ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳԱԶԷՆ ՀՌՈՎՄԱՅ

Սիրեցեալ սրբոց մեռոց, Գերապատիւ Վարդապետաց

եւ Աստուածասէր ժողովրդեան

ողջոյն եւ աստուծաւանդ օրհնութիւն

Սիրեցեալ Որդեակի ի Քրիստոս

Լուսոյ և գիտութեան դար կոչուած 'ներկայ ժամանակին' սովորական յանկերգ մը եղած է դատապարտել Կաթողիկէ Եկեղեցին իբր ուսմանց և գիտութեանց թշնամի. զայն կը նկատեն իբր արգելք յառաջագիւտութեան. և աշխարհիս ամէն կողմը հաւատքի ոխերիմ թշնամիներու մեծագոյն ճիգն է Սուրբ Եկեղեցւոյ ձեռքէն խել մանկանց դաստիարակութիւնը. Յայտնի է, սոյն ճիգն իսկ սպացոյց մըն է թէ Եկեղեցին տանհեւիններորդ եւ քսաներորդ դարերուն չէ՛ սպասած մանկանց կրթութեան վրայ մայրական գորովով մը հսկելու. և քրիստոնէութեան սկիզբէն ի վեր ամէն ազգաց պատմութեան մէջ կը տեսնենք թէ Կաթողիկէ Եկեղեցին եղած է ուսմանց և գիտութեանց ծաւալման ամենէն աւելի հոգ տանողը. կը տեսնենք թէ Անի, հաւատարիմ իւր անմահ փեսային հրամանին «Թող տուք մանկուոյդ գալ առ իս» (Մարկոս Ժ. 14), իւր ամենամեծ զբաղումներէն և հոգերէն մին ըրած է սղայոց կրթութիւնը, ամէն տեղ եւ ամէն դարու մէջ:

Այո՛, միայն կաթողիկէ եկեղեցին լաւ ըմբռնած է թէ՛ այդ փոքրիկ մանուկները ուսմամբ և գիտութեամբ լուսաւորուելիք միտք մը ունենալով մէկտեղ, ունին նաև սիրտ մը և կամք մը, զոր միանգամայն կրթել հարկ է, և առանց որոյ անոնք թերակատար անհատներ պիտի ըլլան։ մասնակի կամ լաւ եւս միակողմանի դաստիարակութիւն մը անոնց միտքը շատ մը ծանօթութիւններով լեցնելով հանդերձ, եթէ չկրթէր նաև անոնց սիրտը և կամքը, պիտի զրկէր զանոնք բարոյական այն կորովէն՝ որու պէտք ունին իրենց ձեռքը յանձնուած ուսմանց և գիտութեանց պործիքը լաւ գործածելու եւ այսօր պէտքով ապահովելու թէ՛ իրենց անհատական երջանկութիւնը, որչափ որ կը ներեն անցաւոր եւ ցաւերու վայր եղող այս աշխարհիս հանգամանքները, եւ թէ՛ միանգամայն օգտակար հանգիստացնելու զանոնք ընկերին։

Եւ որովհետեւ ներկայիս նիւթապաշտ եւ անձնատէր սկզբունքներու հակառակ կուգայ բարոյական դաստիարակութեան հիմը կազմող Կրօնքը՝ այդ մէկ աչքով միայն լոյս տեսնողները կը յանդգնին իրր խաւար նկատել ամէն կրթութիւն ուր Կրօնքը եւս իրեն ինկած բաժինը ունի։ Անմիտներ, չեն զգար թէ որչափ ծաղրելի եւ ֆրդահատելի են որ իրենց կուրուքեան շանդրադառնալով՝ կը համարձակին իրր խաւար եւ անգոյ դատապարտել ինչ որ չեն կրնար տեսնել իրենց խելութեան պատճառաւ։

Դժբաղկարար՝ տղայոց դաստիարակութեան մասին Սուրբ Եկեղեցւոյ դէմ մղուած այս պատերազմը արեւելքի մէջ եւս սկսաւ մուտք գտնել, եւ շատեր թշնամեաց աղմկայից պողտուքներէն չլնորած եւ սարսափած տեղի կուտան անոնց յարձակումներուն։

Այս վիճակին վրայ աւելցուցէք շատ մը ծնողաց սովորական դարձած անտարբերութիւնը և անհոգութիւնը իրենց զաւակաց ուղղափառ կրթութեան և դաստիարակութեան մասին՝ և պիտի տեսնէք թէ՛ ապագան ո՛րչափ մութ գոյներով կը ներկուի ուշագիւր աչքերու առջև։

Ահա, Սիրեցեալ Որդեակք, այսպիսի վտանգաւոր կացութեան մը վրայ Ձեր ուշադրութիւնը հրաւիրել և դարմանին հոգ տանիլ ուղղելով՝ Մեծ Պահոց առթիւ գրուած ներկայ հովուական թղթովս պիտի յիշեցնենք ձեզ, այս անգամ, տղայոց դաստիարակութեան վրայ կարեւոր եղող մի քանի մտածումներ որպէս զի թէ՛ մենք և թէ՛ դո՛ւք Աստուծոյ ահաւոր դատաստանի առջև պարտապան չի մնանք։

Ա. Այս պարտականութիւնը, նախ և առաջ և գլխաւորաբար կը ծանրանայ ծնողաց վրայ, որոնք Աստուծոյ ուղղակի կարգուած են իրր նախախնամական պաշտպան հրեշտակներ տղայոց օգնելու, անոնց վրայ հսկելու, որպէս զի այն փոքրիկներու թէ՛ մարմնաւոր, թէ՛ մտաւոր և թէ՛ հոգեւոր զարգացումը ապահովուելով՝ կարենան նախախնամութեան սահմանած ճամբէն ընթանալ։ Մտածեցէ՛ք, ո՛րչափ ծանր պատասխանատուութեան առկ կը գտնուին այն ծնողք, որոնք բոլորովին անհոգ ու անտարբեր կը մնան երկնից իրենց պարգեւած այս զաւակներու կրթութեան։

Ծնողաց առաջին պարտականութիւնն է Տեառն Մերոյ Յիսուսի սէրը տպաւորել իրենց զաւակաց սրտին մէջ։ Երբ հայր մը, մայր մը առաջին անգամ լսեն իրենց զաւակաց լերնէն արտասանուած հայրիկ, մայրիկ քաղցր

անունները՝ իրենց երջանկութիւնը կատարեալ համարելու համար պէտք է անմիջապէս միացնել տան նաև Յիսուսի երկնային Անունը, Տղաք իրենց մատաղ հասակէն պէտք է սորվին այդ երկրպագելի Անունը, պէտք է գիտնան զայն յարգել և ամէն բան անոր վերաբերել. իրենց մանկական աղօթքները այդ սերէն ներշնչուած և անով տոգորուած ըլլան. այդ հասակէն իսկ սկսուելիք գաստիարակութիւնը, այսինքն անոնց նորափթիթ մտքերուն մէջ տպաւորուելիք ամէն սկզբունքները, աղէկի գէշի գաղափարը, թոյլ տուեալը ու արդիւիտը պէտք է միանան Յիսուսի սիրոյն հետ. սորվին թէ աղէկը Յիսուսի հաճելի է, չարը զայն կը վշտացնէ. Յիսուս է որ կ'արգիլէ մեղքը, Հարկ է նոյն որդիական ջերմ և քաղցր զգացումները ներշնչել նաև հանդէպ Սուրբ Կուսին, զոր մանուկը պէտք է նկատէ իւր իւր մայրը և որու օրհնեալ Անունը կարելի չէ բաժնել իւր Որդւոյն երկրպագելի Անունէն. և կրկնել տալ աղուն յաճախ Յիսուս և Մարիամ քաղցր Անունները. Այսպէսով այն փոքրիկը որ Մկրտութեան Սուրբ Խորհրդովը գերբնական վիճակին բարձրացած է, իւր մտաց զարգացման առաջին վայրկեանէն իսկ կ'սկսի գերբնական մտածութիւններով տոգորուիլ և անոնց ազդեցութեան ներքև գործել. ինչ որ եթէ մինչև վերջը շարունակուի, կատարեալ քրիստոնէական գաստիարակութեան մը տիպարը կ'ունենանք. ճշմարիտ մայր մը որու կը վերաբերի գրէթէ ամբողջապէս այս առաջին գաստիարակութիւնը ի՞նչ հրաշալիքներ կրնայ ընել և միանգամայն մխիթարութիւններ ունենալ, եթէ ինքը իր սրտին մէջ տածէ Յիսուսի և Մարիամու սէրը, և ինչպէս որ պարտքն է, ամբողջ իւր էութեամբ նուիրուի այդ սուրբ գործին:

Բ. Այս կերպով սկսուած գաստիարակութիւն մը, որչափ դիւրութեամբ կրնայ շարունակուիլ՝ տարիքին յառաջանալուն հետ տղուն ներշնչելով քրիստոնէական ոգին, առաքինութեանց սէրը և անոնց գործադրութիւնը. աստիճանաբար կ'աճին անոր հոգւոյն մէջ գերբնական այն սքանչելի առաքինութիւնները որոնց մէկ մասին տիրացած է արդէն Մկրտութեան սուրբ աւագսնին շնորհիւ, և մնացեալներուն ալ սերմը կը կրէ, որոնց աճման համար աստուածային շնորհքը պակաս պիտի չըլլայ. պէտք է միայն խնամոտ ձեռք մը որ այդ մատաղ բոյսերէն հեռացնէ այն ամէն փուշերը ու տատասկները որ արգելք կ'ըլլան այս գեղածածաղ ծաղիկներուն փթթելուն:

Բայց աւանդ, որչափ անգամներ, այդ հոգատար և խնամոտ ձեռքերուն տեղ, այդ խեղճ մանկիկները իրենց շուրջը կը գտնեն ծնողքներ՝ որոնք փոխանակ այդ բարի սերմերը տեղաւորելու իրենց զաւակաց սրտին կոյս հողին վրայ, չեն սարսափիր բնաւ ոճրագործ ձեռքերով զայն թունաւորելու ամէն տեսակ վնասակար նիւթերով. իրենց զուարճութեանց նիւթ կ'ընեն անոնց մանկական պակասութիւնները, բնածին չար հակումները, անգիտակցաբար ընդունուած սովորութիւնները, որոնց ուղղութիւնը սակայն այնչափ հեշտին պիտի ըլլար այդ մատաղ հասակին. Նոյն իսկ կը մղեն զանոնք այնպիսի զգացումներ ունենալու և մեռցանելու իրենց սրտին մէջ որոնց վրայ սպառնալիք իրենք պիտի աւաղեն. Բայց ի՞նչ օգուտ. այդ տարիքին՝ մարդկային սրտին մէջ նոյն իսկ անգիտակցաբար արմատ ձգած սովորութիւնները կարի զփուարէ խլել յետոյ. Ընդհանրապէս հարկ կ'ըլլայ սպասել կամքի կատարեալ զար-

գացման . բայց մինչև այն ատեն ի՛նչ ահաւոր վտանգներ ու փորձութիւններ կը հանդիպին, որոնց անդարմանելի կերպով զոհ կ'ըլլայ խեղճ երիտասարդ մը . կորուստ՝ որու պատճառը այս առաջին դատարարական թեան պակասին մէջ փնտռելու է . կորուստ՝ որու բովանդակ պատասխանատուութիւնը կը ծանրանայ անգութ ծնողքներու վրայ որոնք չճանչցան իրենց պարտականութիւնը :

Գ . Երբ տղան տակաւ կը զարգանայ , երբ իր ծանօթութեանց շրջանակը կ'ընդլայնի , վտանգները եւս կը բազմապատկուին , վտանգ՝ չար ընկերներէ , վտանգ՝ փողոցի հանդիպումներէ , վտանգ՝ անվայել տեսարաններէ , վտանգ՝ աշխարհային գաղափարներէ , վտանգ՝ աշխարհային հանդէսներէ : — Այո՛ , կարելի է տղայ մը գոց տուփի մը մէջ պահելու պէս բացարձակ կերպով անգէտ թողուլ զայն չարէն , կարելի է միշտ գտնել այնպիսի միջավայր մը ուր բանականութիւնը տակաւ բացուած տղան չենթարկուի այս վտանգներուն : Բայց ի՛նչ ըսել այն ծնողաց համար որոնք այս դժուարութիւնները իրենց պատրուակ առնելով , երբ տղան ի վիճակի կ'ըլլայ տունէն դուրս ելնել , այլեւս հոգ չեն տանիր հսկելու անոր յարարերութեանց վրայ . նկատի չեն առնուր անոր խաղի ընկերները և անոնց հանգամանքներուն զգուշութիւն չեն ըներ . երբ այդ ընկերներէն սորված նուազ պարկեշտ վարմունք մը տան մէջ ցոյց տայ , անմիջապէս առջեւ առնելու և նոյն իսկ հարկ եղած խիստ միջոցներով՝ իր յանցանքը իրեն հասկըցնելու փոյթ չեն տանիր :

Ի՛նչ ըսել այն ծնողաց որոնք շատ անգամ կը քաջայերեն իսկ իրենց տղայոց չար տրամադրութիւնները , այդ աւելի զարգացեալ մտքերուն առջև անզգոյշ խօսակցութիւններով ներկայացնելով այնպիսի գաղափարներ՝ տան մէջ ի տես զնելով այնպիսի նկարներ , անոնց տրամադրութեան տակ զնելով այնպիսի գիրքեր ու թերթեր , և նոյն իսկ զանոնք մասնակցեցնելով ա՛յնպիսի հանդէսներու եւ տեսարաններու՝ ինչպէս են այն կառնածելի պարկեշտութեամբ ոգեւորուած պարերը , թատրոնները և նորամուտ բայց ոչ նուազ թունաւորիչ սինեմաներու ներկայացումները որոնց առջև անպատճառ պիտի խորտակուի մանկական այդ տակաւին տկար առաքինութիւնը , քանի որ այս ամէնուն յաճախելու կը քաջայերուի անոնցմէ՝ որոնք իրեն համար երկրիս վրայ գործնական բարձրագոյն հեղինակութիւնը կը ներկայացնեն :

Եւ այս ամէնը կ'արդարացուն գեղարուեստական , գրագիտական կամ գիտական նոր գիւտերու պատրուակին տակ : Այո՛ , գեղարուեստները , գիտական գիւտերը , գրագիտութիւնը կրնան շատ հաճելի , անմեղ և նոյն իսկ շինիչ գուարճութիւններ չնորհել , բայց միանգամայն կրնան ամենամեծ աւերներ եւս գործել : Ահա հոս է ծնողաց ուշադրութիւն ընելիք մեծ կէտը . և դժբախտաբար մեր միջավայրին մէջ ընդհանուր տարածուած ապականութեան երեսէն , գեղարուեստի սովորական արտագրութիւնները , շրջաօրէնութեան հանուած թերթերը ու գիրքերը , հասարակաց հանդիսավայրերը , հեղինակներու և կազմակերպողներու նիւթական շահերը ապահովելու համար ընդհանուր առմամբ հեռու բարոյացուցիչ ըլլալէ՝ նոյն ապականութեան գրգիռ մը ըլլալէ զատ բանի մը չեն ծառայիր : Եւ կը տեսնուին ծնողքներ որոնք իրենք զիրենք բարեպաշտ կարծելով հանդերձ՝ բնաւ խիղճ չեն ըներ մասնիկ այդ մըթ-

նորորտին մէջ և միանգամայն այդ թունարուխ օդը շնչել տալ իրենց երկակո զաւակաց։ Ի՞նչ կ'սպասեն արդեօք այդ միջավայրէն, քրիստոնէական ոգի՞, բարուց կրթութիւն, ջերմեռանդութեան զարգացումն թէ ընդհակառակն հոն պիտի գտնեն ապականեալ սրտի մը յագուրդը կամ նոյն այդ սովականութեան սկզբնաւորութիւնը, չքնաղ առաքինութեանց թառամելը, ամէն վեհ մտածումներու ի սպառ անհետանալը, նիւթապաշտ, երկրաբարչ ցանկութեանց զարթօնքը։

Ի՞նչ ըսել այն քրիստոնեայ կոչուած մայրերուն, որոնք չեն խղճեր քրիստոնէական պարկեշտութենէ և լրջութենէ բոլորովին հեռու մնացող արդու-զարգերու ամենամեծ կարեւորութիւն տալ, որոնք նոյն ճաշակները կը ներ-չնչեն իրենց զաւակներուն, անոնց փոքր հասակէն սկսեալ. ճաշակներ՝ որ ինչպէս իրենց՝ նոյնպէս իրենց դեռատի զաւակներուն յարատեւ մտահոգութիւնը և ամէնօրեայ զբաղումը կ'ըլլան, ի սպառ հեռացնելով զանոնք աւելի լուրջ մտածութիւններէ և աւելի ծանր պարտականութեանց գիտակցութենէ։

Դ. Աւա՛ղ այդպիսի կրթութեան մը ենթակայ ըլլալու դժբախտութիւնը ունեցող տղայոց համար ո՛ւր կը մնայ քրիստոնէական կեանքը. անոնք բնաւ չեն լսեր քրիստոնէական առաքինութեանց անունները, ոչ խոնարհութեան վրայ զաղափար ունին՝ որ քրիստոնէական կենաց հիմը կը կազմէ, ոչ մահա-ցուցման անունը լսած են՝ որ անոր անհրաժեշտ պայմաններէն մին է. անձ-նութեան թիւն և ոչ իսկ մտքերնէն կ'անցնի. եղբայրսիրութիւնը բնական սի-րոյ սահմաններէն աւելի չընդարձակիր. թշնամեաց ներել, կամ մեզի չարիք ընողներու բարիք ընելով փոխարինելը՝ իրենց համար անկարելի համարուած սրբութեան մը հանգամանքները կը նկատուին. ազօթասիրութիւնը, ջերմե-ռանդութիւնը՝ աշխարհի պահանջած վայելչութեան չափով կը խնամեն։ Նա-մանաւանդ թէ այդ մասին իրենք զիրենք այնչափ պարտաւոր կը զգան, որ-չափ թոյլ կուտան աշխարհային զուարճութիւնները։ Իսկ մեղքէ զգուշանա-լու պարտականութիւնը կը յիշեն միայն երբ հեռուանց հեռու ըստ ընդհանուր սովորութեան հարկ կը տեսնեն մօտենալ Սուրբ Խորհուրդներու և այն ալ, ո՛վ Տէր, որպիսի եռանդեամբ, հազիւ փոքր ինչ ամփոփում մը որ քանի մը վայր-կեան կը տեւէ և Եկեղեցիէն ելլելուն պէս կը վերսկսի իրենց սովորական հո-գեւորի անհոգ ու անտարբեր կեանքը։

Այս չէ՞ մերայնոց քրիստոնէութիւնը, ի՞նչ կըսեմ քրիստոնէութիւնը, քրիստոնէութեան բոլորովին ներհակ ընթացքը, արդիւնք նոյն անտարբեր ոգ-ւով տրուած դատարարակութեան։

Ե. Ասոր հակառակ, իրենց պարտականութեան գիտակից ծնողք, տղուն հասակին համաձայն իրենց նուիրական պարտքը կը նկատեն տպաւորել անոր մտքին մէջ այն ամէն սկզբունքները, որոնցմով ի վիճակի պիտի ըլլայ ապա-հովել՝ իր ապագայ կեանքը։ Այսպիսի ծնողք ամէն առիթէ կօգտուին տղուն սրտին մէջ գուրգուրոտ ձեռքով տեղաւորել քրիստոնէական առաքինութեանց սերմերը, եղբայրսիրութիւն, ճշմարտախօսութիւն, պարկեշտութիւն, անձնու-րացութիւն, ջերմեռանդութիւն, ամէն ինչ Աստուծոյ վերաբերելու սովորու-թիւն, միով բանիւ ճշմարտապէս քրիստոնէական կեանքի մը ոյժը, ոյժ մը՝ ու-րով տղան մասամբ ապահովուած կ'ըլլայ իրեն սպառնացող վտանգներու դէմ,

նախզգուշական զօրութեամբ մը կազդուրուած՝ տատնան մը ի վիճակի կ'ըլլայ ինքզինքը պաշտպանելու շրջապատող թշնամիներու գէմ:

Այսպիսի կրթութեան մը միջոցներն են կորով որ տոգորուած ըլլայ սիրով, բարի օրինակ, ընտանեկան յարկին ներքեւ քրիստոնէական սովորութեանց յարգուիլը, նոյն ոգւով դաստիարակութիւն տուող դպրոցի ընտրութիւն և յարասեւ հսկողութիւն սղայոց վրայ:

Կորովը պէտք է որպէս զի ամէն անգամ որ պակասութիւն մը տեսնեն՝ զայն անմիջապէս անոնց սրտէն խլելու աշխատին, երբէք նկատի չառնուին այն վիշտը զոր պիտի պատճառեն իրենց զաւկին՝ անոր ծուռ գաղափարները, չար հակումները ուղղել ուզած ատեննին. ի հարկին պէտք է գիտնան բարերար խտրութեամբ մը նոյն իսկ պատիժներով զինքը ստիպել իւր պակասութեանց ուշադիր ըլլալու: «Որ խնայէ ի գաւազան՝ ատեայ զորդի իւր, իսկ որ սիրէն՝ խնամով խրատէ» (Առաձկ. ԺԳ, 24): Սուրբ Գրոց այս խօսքին համաձայն ով որ չգիտեր իւր զաւակը պատժել, զայն չսիրեր, քանի որ թոյլ կու տայ որ ամբողջ կեանքը թունաւորող որդեր մուտք գտնեն անոր մէջ:

Բայց կորովը պէտք է սիրով տոգորուած ըլլայ, խտրութեան հետ միասին տղան պէտք է տեսնէ սիրոյ ազդեցութիւնը. «Հարք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր» (Եբր. 2, 4.): Երբէք առիթ տալու չէ իրեն այն գաղափարը ունենալու թէ զինքը կը պատժեն կամ իրեն հետ խիստ կը վարուին, որովհետեւ իր ծնողաց հանգիստը կը խանգարէ. թէ իրեն գէմ գործածուած վարմունքը առաջ կուգայ բարկութենէ և այլ կիրքերէ. մտածմունքներ՝ որոնք շատ դիւրաւ մուտք կը գտնեն տղուն մտքին մէջ եթէ ուշադրութիւն և խնամք չտարուի իրեն հասկցնելու թէ այս ամէն բանի մէջ միայն իր բարիքը կը մտածուի: Դարձեալ պէտք է ուշադրութիւն ընել որ տղան ուղղել ուզած ատեննին՝ ծնողք աւելի մեծ պակասութիւններու մէջ չիյնան, ինչպէս շատ անգամ կը պատահի անէծքներով, հայհոյութիւններով և կոշտ վերաբերումներով, որոնք ուրիշ բանի չեն ծառայեր, եթէ ոչ տղուն սրտին մէջ լեցնելու դառնութիւն մը զոր պիտի թափէ աղատութիւն գտած տաղին վայրկեանէն. և անկէ վերջ ալլեւս կարելի չէ անոր վրայ ո' և է ազդեցութիւն ունենալ:

Պէտք է նաև որ տղայոց այս դաստիարակութիւնը հիմնուած ըլլայ նոյն ինքն ծնողաց բարի օրինակին վրայ, պէտք չէ որ տղայոց տրուած սկզբունքները և ծնողաց ընթացքը իրարու հակասական ըլլան. ինչ որ տղուն կ'ուզեն ներշնչել խօսքով, նոյնը պէտք է անոր քոյրտան գործքով: Շատ մը դաստիարակութեանց ամուլ մնալուն գլխաւոր պատճառներէն մէկն ալ այս է. տարբեր օրէնք տղայոց համար, տարբեր՝ ծնողաց համար. և ասկէ կը հետեւի որ տղան՝ փոխանակ այս սկզբունքները իւրացնել ջանալու, անոնցմով տոգորուելու, անհամբեր կ'ապասէ այն երջանիկ վայրկեանին ուր ալլեւս չափահաս ըլլալով՝ պիտի ազատի իրեն վրայ բռնացող այս սոսկ կարգապահական ոյժէն. և ապահով եղէք որ ձեր ուզածէն շատ կանուխ տղան ինքզինքը չափահաս պիտի նկատէ և սանձը իւր ձեռքը առնելով պիտի սկսի ալլեւս իւր անմշակ կամքին կամ ապականեալ սրտին ամէն ծայրայեղութեանց ետեւէն երթալ և ծնողք պիտի զարմանան թէ ինչպէս ապականեցաւ այն տղան, զոր իրենք

այնչափ խնամքով կրթած ըլլալ կը կարծէին : Պատճառը շատ պարզ է : մէկ ձեռքով դրած բարի սերմերը միւս ձեռքով կը խլէին անոր սրտէն : Այո՛ , ծնողք անհատապէս քրիստոնէական կեանք մը վարելու պարտաւոր ըլլալով հանդերձ՝ այդ պարտականութիւնը կ'ը կրկնապատկուի իրենց զաւակաց բարի օրինակ հանդիսանալու հարկէն :

Այս ալ աւելցնենք թէ տղայոց կրթութեան մասին այս ամէն զգուշութիւնք պէտք է պսակուին ընտանեաց մէջ քրիստոնէական կենաց սովորութեանց տիրելովը : Առաւօտեան , երեկոյեան աղօթք , սեղանէ առաջ և վերջ , երբեմն երբեմն հոգեւոր ընթերցումներ , ընտանեօք Սուրբ Աստուածածնայ վարդարանը ըսելու բարի սովորութիւնը , և ասոնք այնպիսի կերպով որ ընտանեաց ամէն անդամները՝ մեծ ու պզտիկ մասնակցին . և ահա այսպէսով ըստ կարելոյն ապահովուած կ'ըլլայ տղայոց դաստիարակութիւնը և Աստուծոյ օրհնութիւնը կը հրաւիրուի այսպիսի դաստիարակութիւնէ մը յառաջ եկած հասարակութեան վրայ :

Ընտանեկան կրթութիւնը դաստիարակութեան հիմը կազմելով մէկտեղ պէտք է շարունակուի կամ աւելի ճիշդ խօսելով պէտք է իր համապատասխանութիւնը գտնէ նաև դպրոցին մէջ ուր տղան պիտի ընդունի իր մասնոր մշակութեան պէտք եղած մոտենդը : Հոս տեղն է յիշել ծնողաց խղճի ծանր պարտականութիւնը՝ դպրոցի ընտրութեան մասին : Այդ կէտին մէջ թերութիւն մը կամ անհոգութիւն մը վեր ի վայր կը չըջէ տղայոց դաստիարակութեան գործը իրենց զաւակաց ուսման համար : Ծնողք մեծ խնամքով պէտք է ընտրեն քրիստոնէական ոգով տոգորուած դպրոց մը , ուղղափառ դպրոց մը , ուղղափառ դաստիարակութեան տեղեակ անձանց ձեռքով կառավարուող դպրոց մը : չըլլայ թէ ընտանեկան ամենայն հոգածութեամբ տրուած դաստիարակութիւն մը չէզոքանայ դպրոցի մէջ տիրող հակառակ կամ անտարբեր ոգիէ մը : վստան զի տան մէջ տեսած բարի օրինակները բաւական չեն չէզոքացնելու վատ կամ անտարբեր դպրոցի մը աղէտալի հետեւանքները : Ահա այսպիսի է մարդկային սրտի ապականութիւնը որ միշտ յիշումէտ է դէպ ի չարն և զայն կ'ընդգրկէ ուր որ ալ գտնէ : Իսկ զայն դէպ ի բարին ուղղելու համար ամբողջ ոյժերու հաւաքումը պէտք է :

Պէտք չէ՝ մոռնալ թէ որչափ ալ ծնողք իրենց զաւակը հասարակաց և ուղղափառ դպրոցներու մէջ մասնաւորապէս դաստիարակութեամբ զրադող անձնուէր և գիտակից անձերու յանձնեն , տակաւին իրենց պարտականութիւնը կը մնայ ամբողջ : վստան զի ինչպէս օրէնքը կ'ստիպէ զիրենք դարձեալ մեծ հոգատարութեամբ հսկելու անոնց նոյն իսկ կաթողիկէ դպրոցներու մէջ ընդունած կրթութեան վրայ : որովհետեւ ամենէն լաւ վարժարաններու մէջ ալ կրնան վտանգայից առիթներ ներկայանալ , գորտնք ժամանակին տեսնելու և անոնց առջևը առնելու համար այս կրկին աշաղուրջ հսկողութիւնը ոչ միայն աւելորդ չէ , այլ կրնայ նոյն իսկ երբեմն անբաւական ըլլալ : Բաց աստի միայն դպրոցի մէջ ընդունուած կրթութիւնը երբէք չէ կարող ունենալ աղուն վրայ պահանջուած բարեբար ազդեցութիւնը՝ եթէ այն կրթիւնը չըլլայ ընտանեկան ջերմ սիրով ներշնչուած հեղինակութեան վրայ : եթէ դպրոցին մէջ ընդունած բարի սկզբունքներուն գործադրութիւնը տան մէջ ալ պահանջուած չտեսնէ տղան :

2. Ծնողքներէ վերջ տղայոց կրթութեան պարտականութիւնը կը ծանրանայ նաեւ դպրոցներու մէջ պաշտօնավարող դաստիարակներուն վրայ, որոնցմէ կը պահանջուին նոյն հանգամանքները աւելի բարձր աստիճանի մը մէջ, որովհետեւ իրենց ազդեցութիւնը պիտի տարածուի ոչ եւս մի քանի տղայոց՝ հապարազմութիւ սաներու՝ որոնք բնութեամբ, սովորութիւններով, հակումներով, ընտանեկան կրթութեամբ և այլ հանգամանքներով իրարմէ բոլորովին տարբեր ըլլալով, հարկ է իւրաքանչիւրին օգտակար կերպով խնամք տանիլ. և միւս կողմանէ չափ անգամ դժբախտաբար ստիպուած են ծնողաց պակասն ալ լրացնել, ինչ որ աւելի մեծ ճարտարութիւն, գիտակցութիւն, համբերութիւն և անձնութեան կրթութիւն կը պահանջէ։ Այս դաստիարակներուն վարքն իսկ պէտք է տիպար օրինակ ըլլայ աշակերտաց, ներկայացնելով քրիստոնէական կենաց կատարելութիւնը՝ իւրաքանչիւրին իր վիճակին համաձայն։ Ո՛հ, աշակերտք որչափ արթուն են իրենց դաստիարակներուն վրայ նշմարելու նոյն իսկ ամենափոքր թերութիւնները և ո՛րպիսի չարամիտ տրամաբանութեամբ կ'օգտուին անոնցմէ ինքզինքնին արգարացնելու։ Դաստիարակները լաւ մտածեն Յիսուսի Տեառն մերոյ սա խօսքերը. «Որ ոք ընկալցի մանուկ մի այսպիսի յանուն իմ զիս ընդունի, եւ որ ոք գալթակղեցուցէ զմի ի փոքրկանցս յայացսնէ յիս հաւատացելոց, լաւ է նմա եթէ կախիցէ երկան իշոյ ընդ պարանոց նորա և ընկղմեացի ի խորս ծովու։ (Մատթ. ԺԸ. 4. 5.) Ահա այս պատճառաւ է որ Եկեղեցին կարելի եղածին չափ մանկանց դաստիարակութիւնը կը յանձնէ սրբակրօն միաբանութիւններու, որպէս զի տղաք գիտութեան հետ միասին միշտ իրենց աչաց առջև ունենան քրիստոնէութեան զլուխ գործոցը, որ է կատարելութեան օրինակները ի գործ դրուած կրօնաւորական վիճակին մէջ. և այն դաստիարակը որ գիտութեանց ուսուցման մէջ քաջ ըլլալով հանգերձ՝ այս մասին կը թերանայ, իր սուրբ կոչման կը զրժէ։

Սրբազան Հօրն Մերոյ Պիոսի Ժ. բացարձակ հրամանին համեմատ դաստիարակները ամենամեծ կարեւորութիւն տալու են Գրիստոնէական վարդապետութեան ուսուցման, որու թերութեամբ կրօնական տգիտութիւնը ընդհանրանալով ժողովուրդները այլևս կ'անգիտանան իրենց պայտականութիւնները և ի ձեռին չեն ունենար այն զօրաւոր միջոցները, որոնցմով ի վիճակի պիտի ըլլան գիմարելու այն ամէն վտանգներուն զոր անհաւատութիւնը ամէն կողմ կը սփռէ և որ առ նուազն անտարբերութիւն յառաջ կը բերէ և կամ մոլոր պաշտօնականներ կը խառնուին ճշմարտութեան։ Ասոր համար քրիստոնէական վարդապետութիւնը պէտք է ընդարձակի տղայոց զարգացման համեմատ. անոնք այն առտիճանի պէտք է մարդուած ըլլան հաւատոյ ճշմարտութեանց որ կարող ըլլան ի հարկին ըմբերանել Ս. Կրօնքի սկզբունքներուն դէմ մաքառողները։

Դարձեալ այդ ուսուցումը պէտք է ամբողջական ըլլայ, առանց յապաւման, հետեւելով յամենայնի Ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ հեղինակութեան և առ այս պէտք է որ դաստիարակները նախապէս քաջ մարդուած ըլլան այս ճիւղերուն մէջ. միով բանիւ տան այս ուսուցման նոյն հոգն ու խնամքը ինչ որ կ'ընեն գիտական ուրիշ ճիւղերու համար։

Վերջապէս քրիստոնէական այս ուղղափառ ոգին պէտք է թափանցէ դպրոցին ամբողջ էութիւնը. ամէն տեղ տեսնուի անոր ազդեցութիւնը, այն ըլլայ ամբողջ դաստիարակութեան անկիւնաքարը, նոյն իսկ արտաքին ուսմանց մէջ անոր հետքը երեւի, ի մասնաւորի դասագիրքերու ընտրութեան և յօրինման առթիւ: Կրօնքի թշնամիները շատ անգամ կը գոհանան անգիտանալ կրօնքը և այս բաժանուժը, այս կրօնական անտարբերութիւնը զոր առաքինութեան տեղ կը դնեն, բաւական կերեւի իրենց չար նպատակին հասնելու: Թշնամիներէ սորուինք անոնց դէմ կռուելու կերպը: Վարժ և Աստուածային սիրով վառուած դաստիարակ մը շատ միջոցներ կը գտնէ ամէն տեսակ նիւթեր աւանդած ժամանակ տղայոց սրտին մէջ տպաւորելու ո՛չ անտարբերութիւնը, այլ կրօնքի Սուրբ հիմքը, զանոնք աստուածային սիրով բորբոքելու, զանոնք յաճախ հաղորդութեան վարժեցնելու, վերջապէս զանոնք ճշմարիտ և գործնական քրիստոնեաներ հանդիսացնելու և այսպիսով կը մօտեցնէ աստուածային Փրկչին գիրկը զանոնք, որոնց համար նա ըսած է. «Թոյլ տուք մանկուոյդ գալ առ իս»:

Է. Բահանայք ևս իրենց վիճակին և կոչման բերմամբ և ի մասնաւորի ժողովրդապետները ի խղճէ պարտաւոր են իրենց ձեռքէն եկած ամէն միջոցներով օգնել տղայոց այս դաստիարակութեան գործին մէջ թէ՛ ծնողաց և թէ՛ դաստիարակներու՝ պարագային համաձայն Ս. Եկեղեցւոյ Պաշտօնեաները պէտք է նախ և առաջ լաւ ըմբռնեն այս դաստիարակութեան կարեւորութիւնը որու վրայ հիմնուած է Գրիստոնեայ ժողովուրդներու ապագայ հաւատարմութիւնը: Պէտք է ստէպ ծնողաց շեշտեն այս մասին անոնց ունեցած ծանր պարտականութիւնները և սորվեցնեն զանոնք ի գործ դնելու կերպը: Շահագրգռուին դպրոցներով և հսկեն անոնց բարւոք կառավարութեան վրայ, ոչ մի զոհողութիւն չխնայեն զանոնք աւելի եւս պայծառացնելու: Եթէ պարագան ներկայանայ չվախճան անձամբ իսկ յանձն առնուլ տղայոց դաստիարակութեան գործը, քան թէ լքել զայն ապիկար ձեռքերու: Գիտնան թէ այդ փոքրիկները իրենց հօտին ամենէն աւելի խնամքի կարօտ և ամենէն աւելի կարեւոր մասը կը կազմեն, անոնց համար առանձինն հոգեւոր հանդէսներ սարգեն ջերմութեամբ շնորհակցելու համար, սուրբ կրթութիւններ տան, անոնց խորհուրդներու մերձեցալուծն համար ամէն տեսակ դիւրութիւններ ընծայեն: ապահով ըլլան թէ ի փոխարէն իրենց անձնուիրութեան՝ հոն պիտի գտնեն ամենամեծ մխիթաթարութիւններ:

Ը. Կը վերջացնենք ամենաշերմ կերպով յանձնարարելով թէ՛ ծնողաց, թէ՛ դաստիարակներու և թէ՛ յարգոյ քահանայից, ի մասնաւորի ժողովրդապետներուն, որ իրենց ամբողջ եռանդը թափեն դաստիարարակութեան գործը պսակելու տղայոց մէջ ամենայաճախ հաղորդութեան սովորութիւնը ներմուծելով՝ ինչպէս կը փափաքի և կը հրամայէ Ս. Բահանայապետն Մեր Պիոս Ժ. որ մարդկային ընկերութեան վերանորոգման մասին իր ջանքերուն արդիւնաւորութիւնը կ'սպասէ նախկին քրիստոնէից համար ընդհանուր եղող այս սովորութեան վերանորոգումէն: Ուստի թէ՛ ծնողք, թէ՛ դաստիարակներ և թէ՛ յարգոյ ժողովրդապետներ և մեր պատուական Կղերը համերաշխ ոգով ամէն ճիգ ի գործ դնեն որպէս զի այս փոքրիկ մանուկները իրենց առաքինութեան

նեցուկ առնուն Ամենասուրբ Հաղորդութիւնը, անով անանին ոյն իսկ ամէն օր Դեր. Ժողովրդապետներ, և յարգոյ քահանաներ և դաստիարակներ մեծ խնամքով ուսումնասիրեն և ծնողաց ծանօթացնեն այն պայմանները որոնք Սրբազան Քահանայապետին հրամանաւ հրատարակուած են և կը դիւրացնեն այս յաճախ հաղորդութիւնը, պայմաններ զոր շատ դիւրաւ կրնայ լրացնել ամէն ոք և ըստ այնմ վարուին աղայոց հետ, զանոնք քաջալերեն, անոնց օգնեն:

Մնողք և դաստիարակներ չգոհանան միայն տղայոց ներշնչելով այս փրկարար միջոցը, հապա իրենք ևս ձեռք առնուն նոյնը իրենց ծանր պարտականութիւնները հաւատարմութեամբ կատարելու համար:

Ո՛հ, որչափ երջանիկ պիտի ըլլանք, եթէ մեր հասարակութեան աւելի արագ քայլով այս ճամբուն մէջ յառաջանալը աեմենք. ո՛րչափ յարերար փոփոխութիւն մը պիտի ներգործէ այս սրբարար խորհուրդը մեր ընտանիքներուն մէջ երբ անոնց ամէն անդամները ամէն օր այս սուրբ սեղանին շուրջ բոլորուին. յարատեւ իրենց մէջ պիտի պահեն զԹիսուս, իրենց վարուց մէջ պիտի ներկայացնեն զԹիսուս, իրենց առաջնորդ և բարեկամ պիտի ունենան զԹիսուս:

Կը հրամայենք որ յառաջիկայ մեծ պահոց մէջ Դերապատիւ Ժողովրդապետները մաս առ մաս կաբդան և մեկնեն Ժողովրդեան Մեր այս կոնդակը և ջանան մտցնել մեր հասարակութեան մէջ հոգեւորական սուրբ կեանքը, տղայոց ուղղափառ կրթութեամբ:

Ահա Մեր սոյն փափաքին իրագործման համար ամէն օր Մեր անարժան աղօթքները կը բարձրացնենք Աստուծոյ՝ մաղթելով Զեզի հոգեւոր և մարմնաւոր բարիք եւ այս առթիւ կը շնորհենք ի սրտէ ամէնուն՝ Մեր Հայրապետական օրհնութիւնը՝ Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ ամէն:

Տուեալ ի Կաթողիկոսարանէ որ ի Բերա Կ. Պոլսոյ, ի 21 աւուր Փետր. ամսոյ եւ ի չորրորդում ամի Պատրիարքութեան Մերոյ:

† ՊՈՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.
Ե. ՊԱՏՐԻԱՐԿ ՏԱՆԵ ԿԵԼԻԿԻՈՅ

ԳԵՌՈՔ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ
Կ. ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԴԻԻԱՆԱՊԵՏ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.— Արսասան-
ման տար. ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին ղրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն:
Տէր Կովստաս Քահանային վարքը. գին 5 դհկն:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար, կը տպուին ամեն լաւ-
տակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-ատրէաներ,
մահազդներ, եւն. եւն. Գիները անմեղքի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյտ՝ գոհ պիտի
նստան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE: I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwickau.

SUCCURSALES EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

- Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.
- Avances sur Marchandises.
- Achat et vente de change sur l'Etranger.
- Escompte d'effets de commerce.
- Emission de chèques, et de lettres de crédit.
- Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.
- Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.
- Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.
- Ouverture de Comptes-Courants, ainsi que d'agréments simples et documentaires.
- Exécution d'ordres de Bourse.
- Garde de valeurs publiques etc. etc.
- Caisse d'Epargne.
- Locations de coffre-fort.